


228

8

6-83







8-3  
36-70

*Handwritten signature*

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

400

Լ

ՏԱՌԵՐԻ ԳԻՆԵՏԻ

1500

աճեալ

յՈՐԵՆԵԱՆԻ

յԻՆԱՏԱԿԻՆ

№ 4

Կրատ. քմ Ա. Բուդուղեանի.

== Ե Ր Ե Բ ==



ՊԱՏՄԻՍԻՍ





11 MAY 2005  
12 OCT 2009

8  
5-83

№ 4

ՀՐԱՏ. ԲԺ. Ը. ԲՈՒԳՈՒԳԵՐՆԻ

№ 4

uz

195

Ե Ր Ե Բ

ՊԱՏՄԻԱԾԲ

5001  
21875

1. Փրկանք: 2. Խորտակած կեանք: 3. հր-  
դեհակող կղզին:



Թ Ի Է Ի Ս  
Տպարան „ԿՈՒԼՏՈՒՐԱ“ ՀՈԼ, Բաղրանկայափող, 14.  
1913

Handwritten signature or mark.



## Փ Ր Կ Ա Ն Ք

Մակեդոնական կեանքից

(Փ. Պարեհից)

I

Մի քանի տարի սրանից առաջ Ամերիկայից Բոլղարիա և Մակեդոնիա էր ուղարկւել միսս էլէն Ստօնը նայելու և քննելու այդ տեղերի բողոքական դպրոցների դրութիւնը: Այդ երկըրները լի են աւազակային խմբերով: Ամերիկուհին գերի ընկաւ այդ խմբերից մէկի ձեռքը և ազատեց մեծ փրկանքով, որ վճարեցին Ամերիկացիք այդ աւազակներին:

Այդ մասին գրւած էր համարեա բոլոր լրագրներում: Սակայն շատ քչերին է յայտնի, որ նոյն գումարը խլեցին այդ աւազակաների ձեռքից երեք խիզախ ու ճարպիկ տղայ:

II

1902 թ. Սալօնիկի հրապարակներէից մէկում կանգ էր առել շրջիկ ցիւրկը: Խուճըրը խիստ թշւառ դրութեան մէջ էր, որովհետև ազգաբնակչութիւնը աղքատ էր, չէր այցելում ցիւրկը,



հնարաւորութիւնն չունէր գեղարւեստական բաւականութիւնն ստանալու:

Յիրկի տէրը մեծ փնաս էր կրում. իսկ արտիստները կիսաքաղց շրջում էին: Մի անյաշող ներկայացումից յետոյ ցիրկի դռնից դուրս եկան երկու երիտասարդ: Դրանցից մէկը գեղեցիկ թուլ ֆրանսիացի էր, ցիրկի լարախաղացը: Նա յայտնի էր Փարիզում: Նրա անւանը հաղարաւոր մարդիկ էր գնում դէպի թատրոն. բայց նորութիւնը տեսնելու ծարաւը նրան ձգեց սարերում շրջող ցիրկը. այժմ նա, ի հարկէ դժգոհ էր իր բախտից:

Ալկիդէսը, այսպէս էր այդ գեղեցիկ մարմնամարզի անունը, իր ընկեր Վիլեամ Բելէտի հետ գնում էր իրենց բնակարանը, որ գտնուում էր ներքնայարկում: Վիլեամը ձիավարժ էր: Նա նիհար ու շէկ անդլիացի էր, ունէր զարմանալի յամառութիւն և անխորտակելի կամք ու սառնարիւնութիւն: Նրանք խօսում էին իրենց թըշառ դրութեան մասին, թէ շուտով Սալօնիկի փողոցներում կըմնան կոպէկի կարօտ:

Նրանց ուշը գրաւեց անցորդների տաք խօսակցութիւնը. բոլորը խօսում էին միսս Ստօնի մասին, որի համար ամերիկացիք 140 հազար ըութլի փրկանք էին տւել աւազակներին: Այդ լուրն ստանալով՝ նրանք տուն մտան, որտեղ նրանց սպասում էր երրորդ ընկերը, ըմբիշ Մարօտցօն:

Երեքով միասին նոքա ապրում էին մի սենեակում:

Մարօտցօն ընկերացել էր դրանց հետ մասամբ այն պատճառով, որ գիտէր ֆրանսերէն: Նա բարձրահասակ բարեսիրտ մարդ էր: Ալկիդէսն ու Վիլեամը սիրում էին այդ մակեդոնացուն, որովհետեւ նա կապւել էր նրանց հետ որպէս մի հաւատարիմ շուն:

Ալկիդէսը ներս մտնելով սկսեց խօսել մակեդոնացիների մասին, թէ նրանք անկուլտուրական ժողովուրդ են, աւազակութիւն, մարդ յափշտակել, գերի տանել կարելի է միայն այնտեղ: Մարօտցօն վիրաւորաժ առարկեց, թէ մակեդոնացիք կուռում են երկրի անկախութեան համար և թէ, թուրքիայի դէմ կռիւ մղելու համար հարկաւոր են խոշոր գումարներ:

Մարօտցօն մի ժամանակ գտնուում էր այն խմբի մէջ, որ այժմ գերի էր վերցրել միսս Ստօնին: Այդ խմբի գլխաւորն էր Ռուշուկը, որի հետ Մարօտցօն անձնական հաշիւներ էր ունեցել, որի պատճառով և թողել էր սարերն ու հեռացել նրանից:

Մարօտցօն՝ լսելով միսս Ստօնի պատմութիւնը՝ յայանեց, որ փողը այժմ կըլինի Ռուշուկի մօտ:

Թեթեւ ընթրիք անելով՝ ընկերները պատրաստուում էին քնելու, երբ Վիլեամը ասաց, որ վատ չէր լինի, եթէ իրենց յաջողէր Ռուշուկից խլել այդ մեծ գումարը:



Այս միտքը ամենքին աշխոյժի բերեց, փախցրեց քունը. մեծ գումարի հեռապատկերը ստիպեց նրանց անմիջապէս ձեռնարկել այդ գործը:

Մարօտցօն լաւ գիտէր սարերը, ու բաջ ճանաչում էր Ռուշշուկին, հետեապէս պիտի ընկերներին առաջնորդէր դէպի այնտեղ:

Քաջ, վճռական, արկածասէր երիտասարդները որոշեցին վերջնականապէս այդ համարձակ քայլն անել: Նրանք դատապարտւած էին չքաւոր կեանքի, այդ գործի յաջող ելքը նրանց հարուստ կը դարձնէր, թէև հարստանալու ճանապարհը սրիկայական էր:

### III

Մարերում, Բուլղարիայի և Մակեդոնեայի սահմանի վրայ գտնուում է Բօնիսկարի աւանը. միայն մի ճանապարհ կայ այդ աւանը գնալու. այն էլ վատ ու դժուար: Տները ընկած են մի գծի վրայ կատաղի գետի ափի երկարութեամբ:

Այնտեղ փոքրիկ տնակում ապրում էր մի կին, մօտ երեսուն տարեկան, աննման գեղեցկուհի: Պատմում էին, թէ նա աւազակապետ Ռուշշուկի կինն ու գլխաւոր օգնականն էր: Նա բժշկութիւն էր կատարում և կարողանում էր լաբել ժողովրդին: Այդ միջոց էր տալիս նրան ծանօթանալու շատ շատերի հետ:

Մի անգամ Վրանօն, այս էր նրա անունը, նստած էր իր տան մօտ և աշխատում էր. յան-

կարծ նրա աչքին երեւաց Մարօտցօն: Վրանօն խիստ վախեցաւ և ճիշտ արձակեց. Մարօտցօն, որ հագել էր բուլղարական շոր, հանգստացրեց նրան, ասելով՝ թէ նրա մօտ է եկել իբրև ընկեր: Խորամանկ Վրանօն սակայն չհրաւիրեց Մարօտցօն ներս և խօսում էր նրա հետ պատշգամբում կանգնած:

Մարօտցօն պատմեց, թէ կեանքի ձախորդութիւններն են ուղարկել նրան այդտեղ: Այն օրից, երբ Վրանօն մերժել էր Մարօտցօն կին դառնալ և գնացել էր Ռուշշուկին, անյաջողութիւնը հետևում է նրան ամեն տեղ: Այժմ նա որոշել է նորից դառնալ սարերը, միանալ Ռուշշուկի խմբին, որովհետև նրան համարում է ամենաընդունակ աւազակապետը, ուզում է թողնել ընդմիջտ թատրոնը և ապրել նախկին կեանքով:

Այնուամենայնիւ Վրանօն չհաւատաց Մարօտցօն, յայտնեց, թէ չի կարող յաջողեցնել, որ Մարօտցօն աւազակապետին տեսնի, վախենում է, որ թուրքական ոստիկանութիւնը կը բռնէ Ռուշշուկին:

Մարօտցօն նոյն իսկ ասաց, թէ նա կարող էր մի օգտակար գործ սարքել, քանի որ ինքը պիտի ուղեկցէ դէպի սարերը մի հարուստ պարոնի, որի հետ գնում է միայն մի ծառայ:

Վրանօն լսեց, բայց մնաց կրկին անվստահ ու զգոյշ: Նա ասում էր, թէ Ռուշշուկը գլխաւոր է շատ հեռու այդ տեղից. հնար չկայ հանդիպելու:



Մարօտցօն իրեն վիրաւորւած ցոյց տւեց և հեռացաւ Վրանօի մօտից:

IV.

Մարօտցօն իր ընկերներին գտաւ Սիւսպլե-  
շա աւանում, ուր պանդոկում սպասում էին  
նրան: Վիլեամը ձեռքէլ էր հարուստ լորդ, իսկ  
Ալկիդէսը նրա ծառան: Պանդոկատը այդ ձի-  
ավարօրէն համարում էր երեւելի հարուստ:

Մարօտցօն ներս մտնելով՝ առաջարկեց ճա-  
նապարհորդներին դուրս գալ, գետը տեսնելու  
լուսնի լուսով: Պանդոկից դուրս գալով և բաւա-  
կան հեռանալուց յետոյ, նա պատմեց ընկերնե-  
րին իր անյաջութեան մասին:

Նրանց ծրագիրը շատ պարզ էր. Մարօտ-  
ցօն պիտի խաբէր Ռուշշուկին, որպէս թէ ու-  
զում է նրա հետ բանակցութեան մէջ մտնել  
կեղծ ճանապարհորդին թալանելու համար. ա-  
պա ստիպել զինաթափ աւազակին ասել փողի  
տեղը, իհարկէ մահաւան սպառնալիքի տակ:

Այժմ նրանց ծրագիրը խորտակեց. խորա-  
մանկ կ'ընէր խաբեց Մարօտցօին, նա կըզգուշացնէ  
մարդուն, որը, եթէ նոյն իսկ այդ տեղերում  
է գտնուում, չհամաձայնի հանդիպել Մարօտ-  
ցօին, այլ միշտ խուսափէ նրանից:

Ընկերներին փնտրելու էր դատարկաձեռն վե-  
րադառնալ Սալօնիկ:

Պանդոկ գալով՝ Մարօտցօն յայտնեց պան-

դոկատին, թէ վաղը նրանք կըգնան Վի-  
զիր: Պանդոկատը վախով բացականչեց, թէ  
այդ ճանապարհին Կարմիր գիւղում մօտ օրերս  
երևացել է Ռուշշուկը, այդ երկրի պատիօր: Եր-  
կու օր դրանից առաջ նա այրել է մի գործա-  
րան և տիրոջը կախել: Անմտութիւն է այդ  
կողմը գնալը:

Վիլեամը հանգիստ լսում էր այդ ամենը և  
գալով իրենց սենեակը՝ դուռն ամուր փակեց ու  
յայտնեց ընկերներին, թէ ինչ որ էլ լինի, նա  
չի հրաժարւի մտածւած ձեռնարկութիւնից:

Նա վճռեց հանդիպել Ռուշշուկին, թէկուզ  
աւազակատը մի քանի տասնեակ մարդ էլ ու-  
նենար իր հետ: Ալկիդէսն ու Մարօտցօն հաւա-  
տում էին Վիլեամի հնարագիտութեանը, սիրտ  
առան և ուրախացան նրա խօսքերից: Այդ գի-  
շեր նրանք մի լաւ քնեցին, քաղցը անըջելով հա-  
րըստութեան մասին:

V.

Շատ դժուար էր մեր ճանապարհորդների  
համար, իրենց աւազակների ձեռքը ձգելը: Ութ  
օր էր, ինչ շրջում էին սարերում, Ռուշշուկին  
հանդիպելու համար, բայց ոչ մի աւազակ նրանց  
չէր պատահում:

Ալկիդէսն ու Մարօտցօն յոյսերը կտրեցին:  
Ալկիդէսը նոյնիսկ այն եզրակացութեան եկաւ,  
թէ սարերում աւազակներ երբէք չեն եղել և



չկան. ու մարդիկ իրենցից են հնարում այդ պատմութիւնները:

Մի օր, երբ նրանց համբերութիւնն արդէն հատել էր, կիրճում լսեց հրացանաձգութիւն և մի խումբ ձիաւոր շրջապատեցին նրանց:

Վիլեամը պահում էր իրեն լորդի վայել զէրքով. նոյնիսկ հարց էր տալիս, թէ ի՞նչ են ուզում այդ մարդիկ: Աւազակներն, ի հարկէ, հանաք չէին անում, կալանաւորեցին նրանց և նստեցրին ջորիների վրայ ու անցան սարերը. միայն Մարօտցօին բաց թողին, հետները չտարան:

Յուսահատ ձայներ էր լսում յետեից Վիլեամը. դա Մարօտցօն էր, նա ֆրանսերէն յայտնում էր, որ դա Ռուշչուկի խումբը չէ:

VI

Գերիները մի քանի ժամ անցան նեղ ու դժւարին կածանով, միայն կէս գիշերին խումբը կանգ առաւ՝ այդտեղ կային մի քանի հիւղեր, խրճիթներ, դրանցից մէկում տեղաւորեցին Վիլեամին և նրա ծառային ու աւին կերակուր: Նրանք մտածում էին իրենց տխուր վիճակի մասին:

Նրանք իրենց անկողին բերող մարդու խօսակցութիւնից իմացան, որ այդ խմբի աւագակապետն է Կալմիրին:

Երբ գիշերը վրայ հասաւ, Ալկիդէսը բարձրացաւ Վիլեամի ուսերը, առաստաղին անցք բաց արաւ, այդտեղից անցաւ կտուրն ու

իջաւ բակը, չորս կողմը մարդ չկար, նա մտածում էր՝ կտուրից գնալ Վիլեամի մօտ, թէ դռնից՝ նրան ազատելու. այդ վայրկեանին չորս ձեռք բռնեցին նրան, տարան նորից հիւղը: Այժմ կապեցին նրանց ձեռքերն ու ոտքերը:

Երբ լոյսը բացւեց գերիների մօտ եկաւ ինքը աւագակապետը, դա հաճելի դէմքով, մի գեղեցիկ տղամարդ էր: Նա արձակել աւեց գերիների ձեռք ու ոտքը, բարկացաւ իւրայինների կոպտութեան վրայ, սակայն զգուշացրեց գերիներին, որ եթէ անգլիացին կըմտածէ փախչել, գնդակը կըհասնի նրա ճակատին:

Վիլեամին ու Ալկիդէսն սկսեցին պարզել, որ նրանք հասարակ, աղքատ մարդիկ են, վերջին ժամանակներս ապրում էին շատ թշուառ Սալօնիկում. այն լուրը, թէ Վիլեամը միլիոնի տէր լորդ է, սուտ է և միայն պարծենկոտութիւն, և ինքն է իրօք հրատարակել:

Աւագակապետը լսեց նրանց և ասաց, որ ինքը կըստուգէ այդ բանը Սալոնիկում. մինչև տեղեկութիւն ստանալը նրանք կըմնան իր մօտ և կըվայելեն նրա հիւրասիրութիւնը:

VII

Այդ օրից գերիների համար սկսեց անսովոր մի կեանք. մի տեղում երկու օրից աւելի չէին մնում. որովհետեւ թուրքական ոստիկանութիւնը հետևում էր աւագակներին: Խումբը տե-



ղափոխութեամբ էր միշտ գիշեր ժամանակ, երբ ոչ ոք ոչինչ չէր կարող տեսնել. ճանապարհն անգամ տեսնել անհնարին էր լինում շատ անգամ: Պէտք էր միայն վստահել ջորիներին, որոնք շատ լաւ գիտէին ամենավտանգաւոր կածանները, որ անցնում էին ժայռերի ու անդունդների եզրերով:

Աւազակները հազել էին թաղիքէ (քէշա) կօշիկներ, քայլելիս ոչ մի աղմուկ չէր լսուում. այդ տեղափոխութիւնը ունէր խաղաղ բնաւորութիւն, որի ընթացքում ոչ մի յարձակում չէր կատարուում: Աւազակները գերիների հետ վերաբերւում էին շատ ուշադիր ու լաւ:

Այսպէս անցան երկու շաբաթ, դեռ Սալոնիկից լուր չէր ստացել:

Ամեն ինչ խաղաղ էր ու հանդարտ. մի գեղեցիկ առաւօտ, ծէգից առաջ, մի խումբ ձիաւորներ թեք կածանով վեր էին բարձրանում սարերը, այդ խումբը մօտենալով մեզ՝ կրակ բացեց:

Աւազակներից երկուսը պատրաստի հրացանները ձեռքներին մօտեցան Վիլեամին և Ալկիդէսին նրանց պաշտպանելու համար, միւսներն առաջ անցան:

Գերիները մտածում էին, թէ անյաջող դէպքում աւազակները նրանց անդունդ կը գլորեն, որ աղատեն մի բեռից: Մի ակնթարթում նրանք իրենց պահապաններին յանկարծակի բը-

ռունցքի հարւածներով գետին գլորեցին և սկսեցին փախչել դէպի յարձակողները:

Մեծ էր նրանց զարմանքը, երբ յարձակողների մէջ նրանք տեսան Մարօտցօին և մի քանի մարդկանց, որոնք ոստիկաններ չէին:

Բանից դուրս եկաւ, որ Ռուշչուկը չէր կամեցել հարուստ ճանապարհորդներին զիջել կալմիրին. նա կանչել էր Մարօտցօին և նրա հետ հետապնդում էր կալմիրին՝ նրա ձեռքից խլելու Վիլեամին ու Ալկիդէսին:

## VIII

Վիլեամն ու Ալկիդէսը այժմ Ռուշչուկի գերին էին: Վերջինս նրանց ընդունեց շատ սառը, նոյն իսկ կոպիտ կերպով: Վիլեամի համար պահանջեց 20 հազար ուլքի փրկանք, Ալկիդէսի համար 5 հազար: Իսկ մտածելու նրանց տեց մի ամիս ժամանակ:

Արկածախնդիրներն անշուշտ չտխրեցին. իրենց ծրագրի առաջին մասն արդէն կատարել էր, մնում էր մշակելու երկրորդ, ամենադժուոր մասը:

Մարօտցօին չէր յաջողում գաղտնի խօսակցել ընկերների հետ. մի շաբաթ անցաւ այդպէս, մի օր յարմար բոլէ գտնելով, մօտեցաւ ընկերներին և յայտնեց, որ պատրաստ են փախչելու. ոչ ոք չլսեց այդ:



Այդ օրը աւագակներ խումբը թողեց իր կայանը և շարժւեց դէպի անտառը:

Բարձր կաղնիներն ու հաճարենիները իրենց խիտ ճիւղերով տեղ տեղ անանցանելի էին դարձնում անտառը: Գերիններին, որ գնում էին խմբի մէջ տեղով ջորիների վրայ նստած, հսկում էին չորս հոգի և աչքները չէին հեռացնում նրանցից:

Ռուշչուկը հրաման-հրահանգ տւեց իր օգնականին ու ինքը հեռուցաւ խմբից, անյայտացաւ անտառի մթութեան մէջ:

Փախուստի մասին չէր կարելի մտածել. խումբը գնում էր ոտքով և շատ դանդաղ:

Անցաւ երկու ժամ, երբ Ռուշչուկն արդէն հեռացել էր. յանկարծ տնքոցի ու կսկծի ձայներ լսւեցին. խումբը կանգ առաւ: Փլւածքի միջից դուրս ցլեց Մարօտցօի գլուխը. նա լացի ձայնով գանգատւում էր, թէ ընկել է առուն և կոտրել ոտքը: Նա չէր կարողանում գնալ: Նրան նստեցրին ջորուն Ալկիդէսի հետ միասին: Բայց շուտով սկսեց աւելի սաստիկ անքալ և հեկեկալ, թէ սաստկանում է ոտքի ցաւը, և խնդրեց մի բոլակ կանգ առնել:

Գերինների և նրանց պահապանների խումբը կանգ առաւ: Մարօտցօն ջորու վրայից ցած եկաւ և խնդրում էր Վիլեամին կապել ոտքը: Վիլեամն ու Ալկիդէսը ջորիներից իջան և Մարօտցօի ցուցումով ձեռքները տարան նրա գլուխը, որպէս թէ կապեր հանելու, բայց ի մեծ

ուրախութիւն իրենց, այնտեղից հանեցին երկու ատրճանակ:

Մի ակնթարթում երեքն էլ ոտքի ելան և յարձակեցին պահապանների վրայ. Մարօտցօն բռնեց նրանցից երկուսի կոկորդը, իսկ Վիլեամն ու Ալկիդէսը ատրճանակները բռնեցին միւս երկուսի կրծքին: Պահապանները յանկարծակի եկան և ստիպւած էին զինաթափ լինել, եթէ չէին ուզում մեռնել. մանաւանդ որ նրանց ընկերները բաւական հեռացել էին, աչքից կորել. օգնութիւն չէր կարող գալ:

Պահապաններից չորսն անարգել յանձնեցին դէնքերը Մարօտցօին, որը նրանց խորհուրդ տւեց իրենց տները գնալ, այլևս չմիանալ նոյն խմբին, որովհետեւ, եթէ առանց գերինների նրանք ընկերների մօտ գնային, անպայման կը պատժւէին:

Ուրախ ու խրախուսւած յաջողութիւնից, մեր երեք արկածախնդիրները ուղղեցին դէպի Բօնիսկարի աւանը, ուր գնացել էր ինքը Ռուշչուկը:

Մարօտցօն գիտէր, որ Ռուշչուկը գնաց Բոնիսկարի, կնոջ մօտ, որի մօտ էր գտնում և ամերիկացիների մեծ գումարը:

Ծէգից առաջ ընկերները հասան աւագակապետի տուն: Ժամանակ կորցնել չէր կարելի, բոլակն անգամ թանգ էր, Մարօտցօն ու Ալկիդէսը մօտեցան տան դռանը, իսկ Վիլեամը պահապան կանգնեց լուսամուտների մօտ:



Վրանէսը դուռը բաց արեց և տեսաւ Ալ-  
կեդէսին. նա իսկոյն հասկացաւ գործի էութիւ-  
նը, խլեց կացինը և խփեց Մարօտցօի ուսին,  
լայն վէրք բաց արեց: Ալկեդէսը ոլորեց նրա  
ձեռքը: Կնոջ աղաղակին դուրս թռաւ հրացանը  
ձեռքին Գրիգոր Ռուշչուկը: Սակայն Վիլեամը  
կանխեց նրան և ժամանակին աթոռով խփեց  
գետին գլորեց նրան ու հրացանը խլեց ձեռքից:  
Ապա ատրճանակը բռնելով ճակատին, պահան-  
ջեց յանձնել իրենց միաս Ստօնի փրկանքը:

Սկզբում աւագակը չէր համաձայնուում.  
երբ տասը ըռպէն անցաւ, որ տւել էին նրան  
մտածելու համար, նա ասաց, որ փողը պահած  
է գետնայարկում:

Երբ արեւը ծագեց, մինչ Ռուշչուկն իր կնոջ  
հետ ձեռքերն ու ոտքերը կապած նստած էր  
սենեակում, մեր քաջերը ծանր արկղն ուսներին  
հասան երկաթուղու մօտիկ կայարանը: Բարե-  
կամբար միմեանց ձեռք սեղմեցին և եղբայ-  
րաբար բաժանեցին այդքան դժւարութեամբ  
ձեռք բերած խոշոր գումարը:

Պատմում էին, որ այդ մարդիկ Ֆրանսիայի  
հարաւային քաղաքներից մէկում արտիստների  
համար ապաստանարան բաց արին այդ գումար-  
ով, որպէսզի ամեն մի անյաջող արտիստ կա-  
րողանայ տեղ գտնել այդտեղ և հեռու մնալ  
անյաջող ըռպէսներին յանցանք գործելուց:


(Հունգարական պատմամբ)

Տենչալի գարունը հասել էր. եասամանները  
ծաղկել էին: Ոչ մի տեղ նրան այնպէս ուրախ  
չեն դիմաւորում, ինչպէս լեռնային երկիրնե-  
րում, ուր ծերուկ ձմեռը աւելի երկարատե է  
լինում, քան դաշտավայրերում:

Ես սիրով ընդունեցի հօրեղբօրս առաջար-  
կը, մի քանի օր նրա մօտ Բ...ում մնալու, որ  
ռազմական սահմանի մօտ շուկայի տեղ էր ծա-  
ռայում, և ճիշտն ասած չզղջացի էլ:

Այնտեղ ես ծանօթացայ մի քանի ընտա-  
նիքի հետ և օր չէր անցնում, որ մենք անտառ-  
ները կամ լեռները չգնայինք զբօսնելու: Յաճախ՝  
գերմանական ու հունգարական կազինօներում  
խնճոյքներ, կոնախաղեր (կէզլի) և ուրիշ ամա-  
ռային զբօսանքներ էինք կազմակերպում:

Հոգեգալստի օրը պատրաստեցինք գնալ  
Կօրօնի գեղեցիկ ջրվէժը, որը ահագին բարձրու-  
թիւնից թափւում էր լճակը: Շրջապատի հրա-  
շալի բնութեան գեղեցկութիւնը մոռացնել տաւ  
մեզ ճանապարհի բոլոր դժւարութիւնները:  
Տեղի դատաւորը, մեր ճանապարհորդութեան  
միջոցին իր վրայ էր վերցրել տնտեսական մա-  
սը և սիրով հոգացել բոլորիս յարմարութեան  
համար: Պատրաստել էր մեծ քանակութեամբ  
խալիչաներ, վերցրել էր գինի և ուտելիղէն:  
Միևնոյն ժամանակ չէր մոռացել վերցնել մի





քանի գնչուներէ, իրանց ջութակներով և ծընծ-  
ղաներով: Բոլորիս տրամադրութիւնն էլ սքան-  
չելի էր: Բնութեան հսկայական գեղեցկութիւնը,  
գնչուների զւարթ և կրքոտ երգերը, և հունգա-  
րական անոյշ զինին, նպաստում էին ընդհանուր  
ուրախութեան: Երբ սեղանի վրայ երգերը և ու-  
րախութիւնները հասել էին իրանց գագաթնա-  
կէտին, յանկարծ բարձրից հնչեց մի ինչ որ  
քնքոյշ և և տխուր մեղեդի, որին ամենքս էլ  
ակամայից լսում էինք մեծ հրճանքով: Երգը  
դադարել էր արդէն, բայց բոլորս էլ լուռ, կա-  
խարդաժի նման, տեղներիցս չէինք շարժւում:  
Ոչ ոք չէր համարձակւում ընդհատել լուծթիւնը:  
Վերջապէս ես հարցրի.

— Արդեօք ո՞վ կարող է լինել այդ երգիչը:  
Ահեղ վիշտը միայն ընդունակէ նման հնչիւններ  
դուրս հանել մարդու կրծքից:

— Այո. պատասխանեց դատաւորը. թշուառ  
Վիրգիլիոսը իրաւունք ունի գանգատել իր  
դժբախտ վիճակից: Խղճի խայթից տանջւելով,  
թափառում է նա մեր լեռներում, որոնում իր  
ձեռքով կորուստի մատնած իր Լիբիային:

— Ի կորուստ մատնած Լիբիայի՞ն...

— Այո. դա մի յուզիչ պատմութիւն է, որ  
մի քանի տարի առաջ պատահել է հէնց այս-  
տեղ:

— Պատմեցէք, խնդրում ենք:

— Տեսնո՞ւմ էք այն բարձր, սրածայր ժայ-  
ռը, որ կախած է միւսների վրայ: Տասը տարի

առաջ, այնտեղից վայր է նետել իրան մեր շէնի  
առաջին գեղեցկուհի-Լիբիան:

— Սոսկալի է:

— Այո, մեծ վիշտ էր այդ նրա ծնողների  
համար, ևս առաւել Վիրգիլիոսի համար, որը  
նրա մահւան պատճառը իրան էր համարում:  
Համառօտ կը պատմեմ ձեզ դէպքի եղելութիւնը:  
Լիբիան և Վիրգիլիոսը երկու հարևանների երե-  
խաներ էին, որոնք մանկութիւնից արդէն բա-  
րեկամացել և սիրել էին միմեանց: Լիբիան  
փոքր էր Վիրգիլիոսից մի քանի տարով: Նրա  
հայրը, գնչու Պետտին գաղթելով մեր կողմերը,  
գնել էր իր համար մի կտոր հողաբաժին: Իր  
առօրեայ քրտնաթոր աշխատանքով՝ նա՝ միւս  
գիւղացիներից պակաս չէր մշակում գետինը և  
տօն օրերին նրանց նման իր վաստակած կոպէկ-  
ները օղետներում չէր վատնում. այլ քաշւում  
էր անտառ իր ջութակով և այնտեղ կանաչ խո-  
տի վրայ պառկած, մինչև կէս գիշեր նւագում  
իր հայրենի քաղցր մեղեդիները: Այդտեղ ծանօ-  
թացաւ նրա հետ հայր Վասիլի միակ դուստր—  
Մարիան, որից յետոյ այլևս համարեա թէ, չէր  
մասնակցում երիտասարդների պարահանդէսնե-  
րին և նրա զբօսանքի տեղը միմիայն անտառն  
էր: Նա հիանում էր Պետտիի նւագելուց և քանի  
նրա տաղերի քաղցր հնչիւնները շոյում էին  
Մարիայի ականջը, այնքան նա խորասուզւում  
էր մտածմունքների մէջ: Վերջապէս հասաւ ա-  
շուհը: Գիւղումը, ոչ ոքի մտքով անգամ չէր



անցնում, որ իր գեղեցկութեամբ այնքան հպարտ Մարիան գնար անտառ՝ հասարակ գնչուի սե-  
ւաչեայ Պետտիի հետ տեսակցելու: Եւ նա իր  
հոգու ամբողջ թափով սիրում էր Պետտիին, և  
առանց նրան չէր կարող ապրել:

Բայց նա սիրում էր իւր ծնողներին ևս և  
լաւ գիտէր, որ նրանք երբեք չեն համաձայնի  
ամուսնացնել իրան հասարակ գնչուի հետ: Նա  
յաճախ ասում էր Պետտիին. — Պետտի ես քեզա-  
նից բաժանել չեմ կարող, այդ ինձ համար  
մահ կըլինի: Ախ, Պետտի, ի՞նչ արիր ինձ:

— Ո՛չ թէ ես, այլ սէրն է արել այդ, պա-  
տասխանում էր Պետտին: Սպասիր Մարիա, ես  
կերթամ հօրդ մօտ և կըխնդրեմ քո ձեռքը: Եթէ  
նա մեզ չի օրհնի, այն ժամանակ դու իմ կինը  
կըդառնաս մեր գնչուների սովորութեան հա-  
մաձայն: Համաձայն ես, Մարիա:

— Այո, համաձայն եմ, պատասխանեց նա և  
առաջին անգամ միասին մտան գիւղը ձեռք ձեռ-  
քի տւած:

Հէնց այդ միջոցին քահանայի տանը մեծ  
իրարանցում կար: Չնայելով, որ Պետտին գիւղի  
երիտասարդներից ամենից գեղեցիկը, խելօքն ու  
աշխատասէրն էր, այնու ամենայնիւ քահանան  
դէմ էր այդ պսակին: Մինչև անգամ, Մարիան  
սպառնում էր անձնասպան լինել, բայց այդ էլ  
չօգնեց:

— Հայրիկ, թող խստասրտութիւնդ, խղճս  
մեզ, աղերսում էր Մարիան:

— Բայց չէ՞ որ նա մի հասարակ գնչու է,  
աղջիկս...

— Մի՞թէ նա մեղաւոր է, հայր, որ այն  
Աստուածը, որին դու սպասաւորում ես, նրան  
գնչու է ստեղծել: Բայց Պետտին համաձայն է  
և պատրաստ է մկրտւելու... Ես սիրում եմ  
նրան, հայր, և պատրաստ եմ մեռնել նրա հետ.  
Ծնկաչոք հայցում եմ քո օրհնութիւնը, հայր...

— Բաւական է, Մարիա, վեր կաց. — ասաց  
Պետտին. — երկար խօսելը աւելորդ է: Նա վերց-  
րեց սեղանի վրայ դրած խաչելութիւնը և դառ-  
նալով դէպի նա, ասաց, — այստեղ, այս խաչե-  
լութեան առաջ, երդւում եմ սիրել և յարգել  
քեզ, իբրև կնոջս, Մարիա, և հոգալ քեզ համար  
մինչև մահս. ինձ հետեւելու համաձայն ես:

— Այո, համաձայն եմ. Պետտի, հաստատ  
կերպով պատասխանեց նա:

— Այս էիր ուզում, հայրս թող Աստուած  
ներէ քեզ, ինչպէս և մեզ կըններէ: Այս ասելով,  
ձեռք ձեռքի տւած դուրս եկան սրանք տանից:

Պետտին մի փոքրիկ այգի ունէր, գիւղացի  
Պաւելի այգուն կից: Իւր ծերութեան հասակում,  
Պաւելը ամուսնացել էր մի ուրիշ գիւղացի օրիորդի  
հետ: Բայց բախտը երկար չէր ժպտացել նրան:  
Շուտով ծննդբերութեան ժամանակ մեռել էր  
կինը, թողնելով նրան մի առույգ և գեղեցիկ որդի:  
Կնոջ մահից յետոյ նա ապրում էր բոլորովին ա-  
ռանձնացած: Իւր Վիրգիլիոս, որդու ջերմ սէրն էր  
միայն, որ կապում էր նրան կեանքի հետ: Գե-



դեցիկ էր Վերգիլոսը: Թուխ գանգուրները շրջագծում էին նրա վարդագոյն երեսը, որի վրայ փայլում էին մեծ, կապոյտ աչերը: Մի անգամ աշնանը Մարիան եկաւ Պաւելի մօտ: Այդ ժամանակ Վերգիլիոսը երեք տարեկան էր: Հպարտ Պաւելը սկզբում ուշադրութիւն չէր դարձնում իւր հարեանների վրայ և խոյս էր տալիս նրանց ծանօթութիւնից. բայց վերջը աղամայից նկարեց նրանց, նամանաւանդ այն ժամանակ, երբ Պետտին, բոլորովին մի կողմ ձգած իր ջութակը՝ Մարիայի թախանձանքով՝ նորից սկսել էր նւագել երեկոները: Երաժշտութիւնը բարերար ազդեցութիւն գործեց Պաւելի վերայ: Նրա ջախջախեալ սիրտը նորից հաշտուեց կեանքի հետ: Պետտի ջութակի լարերից դուրս թռչող մերթ ուրախ ու մերթ լալագին հնչիւնները, յաճախ հրապուրում էին Պաւելին նրանց պարտէզները բաժանող ցանկապետի մօտ. և մի անգամ նոյն իսկ առանց իրան հաշիւ տալու, յանկարծ մտաւ նրանց պարտէզը:

— Ա՛խ Պետտի, ասա խնդրեմ. այդպէս գեղեցիկ նուագելը քեզ ո՞վ է սովորեցրել: Զութակիդ հնչիւնները եկեղեցական երգեհոնների նման են ազդում մարդու սրտի:

— Ասացէ՛ք խնդրեմ, քեռի Պաւել, բացաւանչեց Մարիան, — Այդպէս հրաշալի նուագող մարդուն միթէ կարելի է չսիրել. նամանաւանդ, որ ինքն էլ վեհանձն է: Մեր կատարեալ եր-

ջանկութեան համար միմիայն եկեղեցու օրհնութիւնն է պակաս:

— Մարիա, այն քայլը, որը դու սիրուց դրդեալ առիր, կեանքի մէջ շատերը թեթեամութեան և կրքերի ազդեցութեան տակ են անում: Աշխարհս գնալով վատանում է: Ինչպէս կարող ենք պահանջել մեր աղջիկներից համեստ վարք ու բարք, երբ գայթակղիչ օրինակները միշտ նրանց աչքների առաջն են: Ես զարմանում եմ հօրդ վարմունքի վրայ, Մարիա: Ի՞նչպէս կարողացաւ նա առանց խղճարեւելու երես դարձնել իր հարազատ զաւակից: Նա լսե՛լ է Պետտի նուագելը:

— Ո՛չ, երբէք. նա մեզ չի էլ այցելում. տխուր հառաչելով ասաց Մարիան. իսկ Պետտին հպարտ է, և խորամանկութեամբ նրան մեզ մօտ հրապուրել չի կամենում: Այդ խօսակցութիւնից յետոյ, երկու դրացիները աւելի ևս մտերմացան իրար հետ: Ծերունի Պաւելը մի անգամայն սիրեց Մարիային և նրա ամուսնուն: Իւր կրած վշտի ազդեցութեան տակ նա ներողամիտ էր դարձել դէպի մարդոց թուլութիւնները ու կրքերը: Նա վճռեց հաշտեցնել քահանային դստեր հետ, որը սաստիկ տանջում էր իր հօր այդքան երկար շարունակող բարկութիւնից, բայց ծածկում էր այն Պետտիից: Տանջւում էր կրկնակի, որովհետեւ սիրոյ պտուղն արդէն կրում էր իր արգանդում:

— Քեռի, ինձ տանջում է այն միտքը, որ



զաւակս չի կրելու իր հօր անունը: Յոյս ունեմ, որ գոնէ դու չես թողնի մեզ: Կըզառնաս նրա կնքահայրը:

— Ի հարկէ. և եթէ աղջիկ լինի այժմանից իսկ խօսք եմ տալիս ուզել Վերգիլիոսին համար, որովհետեւ նա էլ անկասկած իւր մօր նման բարի և գեղեցիկ է լինելու, ծիծաղելով վրայ բերեց ծերունին:

Նոյն երեկոյեան Պաւելը գնաց քահանայի տուն և ինչ որ պատրւակով հրաւիրեց նրան իր մօտ հէնց այն բոլորին, երբ Պետտին ջութակ էր նւագում: Այդտեղ քահանային նոյնը պատահեց, ինչ որ մի ժամանակ Պաւելին: Հարկան տանից պարտէզ թափանցող ջութակի իւրաքանչիւր հնչիւնը ազահուրթեամբ կլանում էր նա: Եւ այդպէս շարունակ, համարեա թէ ամեն երեկոյ յաճախում էր նա Պաւելի տուն, որը կարծես պատահաբար խօսակցութեան նիւթը միշտ փոխում էր իր դրացիների վրայ: Նա յաճախ յիշեցնում էր, թէ ինչպէս Մարիան տանջւում էր իր ծնողների կարօտով և ինչպէս սոսկալի է նրա համար եկեղեցու օրհնութիւնից զրկւած լինելը: Այդ խօսակցութիւնը միշտ շփոթեցնում էր քահանային: Վերջապէս հասաւ ծննդեան տօները: Թաթախման գիշերը հայրը այցելեց իր դստեր և ներեց նրան: Մարիան և իր ամուսինը հրաւիրւեցին ծննդեան տօնը ծնողական յարկի տակ անցկացնելու: Փոքրիկ աղջիկը, որին մկրտութեան ժամանակ անւանել էին Լիբիա, գար-

նան քնքոյշ ծաղիկի նման մեծանում էր գնչուհու տանը և այդ ոչ ոքի այնպէս չէր ուրախացնում, ինչպէս Վերգիլիոսին, որը նրան իր ապագայի խաղընկերունիին էր համարում: Նա ժամերով նստում էր մանկան օրօրոցի մօտ և նրան նայելուց չէր կշտանում: Հրճւանքով հետևում էր նրա առաջին քայլերին և միայն նրան էր թոյլ տալիս վարւել իր հետ այնպէս, ինչպէս որ նա կամենում էր: Նրանք իբրև հարազատներ էին մեծանում:

Մի անգամ, պատանեկական հասակում, Լիբիան արցունքը աչքերին նրա մօտ վազելով՝ պատմեց, որ դպրոցում երեխաները իրան «գընչուի ճուռ» են անւանել:

Վերգիլիոսը հանգստացնելով նրան՝ խոստացաւ պաշտպանել: Միւս օրը այդ վիրաւորողները մի այնպիսի ծեծ կերան, որ այլևս ոչ ոք չէր համարձակւում ջգրացնել Լիբիային: Այն ինչ, աղջիկը քանի գնում հասունանում էր և իւր վայելչակազմ տեսքով կախարդում ամենին: Նա շուտով բոլոր աւանի սիրելին դարձաւ:

Վերգիլիոսը ևս, նոյնպէս առողջակազմ և եռանդոտ երիտասարդ էր: Բնականից զինւոր, ռազմական սահմանի բնակիչների մեծ մասի նման, սիրում էր և գիւղական աշխատանքը: Նրան ոգևորում էին զինւորական ու քաղաքի կեանքը և ռազմի դաշտի դափնիները:

Տասնեկինը տարեկան հասակում նշանւելով Լիբիայի հետ, մտաւ զինւորական ծառայու-



Թեան և տեղաւորեց Բուլապեշտեան որսորդական գումարտակի մէջ: Իւր խելքով, ճարպիկութեամբ և վճռականութեամբ շուտով գրաւեց իւր իշխանաւորներին բարեացակամութիւնը և վեց ամսեայ ծառայութիւնից յետոյ՝ ստացաւ տասնապետի աստիճան:

Ուրախ էր Լիբիան, ուրախ էր և ծերունի Պաւելը: «Վիրգիլիոսը ամբողջ աւանի պարծանքն է լինելու», գուշակել էր վհուկը, առաջին անգամ նրա նամակով իրեն մօտ եկողներին:

1878 թ. պատերազմը սկսեց Բօսնեայի հետ և այն գումարտակը, որի մէջ Վիրգիլիոսն էր, հրաման ստացաւ գնալ պատերազմի դաշտ: Լիբիան ևս իւր հօր հետ գնաց Բուլապեշտ: Պետտին վերջին տարիները բաւականին աւելացրել էր իր կալւածները և հարուստ գիւղացիներից մինն էր համարուում: Վիրգիլիոսի հրաժեշտը իւր հարսնացւի հետ վերին աստիճանի սրտառուէ էր: Լիբիան լալիս էր և երգում հաւատարիմ մնալ նրան մինչև մահ, խոստանում էր ամեն կիւրակի մօտ վառել Տիրամօր պատկերի առաջ, որ պահպանէ նրան: Իսկ Վիրգիլիոսը խոստանում էր ըստ հնարաւորին յաճախ նամակ գրել և պահեց իր խօսքը: Սկզբում նամակները համարեա թէ ամեն շաբաթ էին ստացւում և նրանց մէջ Վիրգիլիոսը նկարագրում էր իր գումարտակի քաջութիւնները: Հոկտեմբերի վերջերին գրում էր նա, որ մի ճակատամարտում գերազանցելով խաչ է ստացել: Լիբիան քիչ մնաց

որ ուրախութիւնից խելագարւէր, — ախ Աստուած Վիրգիլիոսը, նրա սիրուն Վիրգիլիոսը գերազանցել է ճակատամարտի մէջ, իսկ ինքը մի հասարակ գնչուհի, նրա հարսնացուն է: — Գոնէ շուտով վերջանար այդ անպիտան պատերազմը: Նըրա մտքով անգամ չէր անցնում, որ այդ պատերազմը կարող է խլել իր հոգու հատորին:

Ես մի դուստր ունէի Բլանկա անունով, որը այդ միջոցին 17 տարեկան էր: Նա ամեն լրագիրների մէջ կարդում էր եղած կորուստների մասին, որովհետև իմ աներորդիս էլ այդ միջոցին պատերազմի դաշտումն էր: Մի օր, բոլորովին գունատւած, վազելով ընկաւ սեւեակս և յուսահատ կերպով բացականչեց.

— Ախ, հայրիկ, սոսկալի լուր, խեղճ, թըշւառ Լիբիա... սպանել... սպանել են նրան...

— Ի՞նչ, ինչ է պատահել, սարսափած հարցրի ես:

— Վիրգիլիոսը սպանւած է... այ, կարգա... Մի տակ սպանուածների թւում տասնապետ Վիրգիլիոսն էլ յիշւած է: Ի՞նչ ասեմ Լիբիային, երբ նա ըստ սովորութեան կըգայ հարցնելու: Գիտես, հայրիկ, ես ստել չեմ կարող, բայց և չեմ էլ կարող յայտնել նրան այդ լուրը: Ի սէր Աստծոյ, դու հաղորդիր նրան այդ:

Ես կարծում էի, որ աւելի լաւ է աստիճանաբար նախապատրաստել սիրող աղջկան, սոսկալի կորուստի մասին և դրա հետ միասին դեռ յոյս ունէի, որ գուցէ հաղորդած լուրը



սխալ է: Մի այդպիսի առողջ, ուրախ և կենսունակ երիտասարդ մահւան զոհ գնալու մասին մտածելն անգամ տարօրինակ էր ու ցաւալի: Բայց շաբաթները անցնում էին իրար յետևից և Վիրգիլիոսի մասին ոչ մի լուր չկար: Լիբիան քանի գնում աւելի անհանգստանում էր: Յիշում եմ, մի անգամ ուրախ ժպիտն երեսին, եկաւ նա ինձ մօտ և խնդալով հարցրեց.

— Պ. դատաւոր, ճիշտ է, որ պատերազմը վերջացել է, այդ ինձ իլիան ասաց, որ Տեմիշ-վարից նոր է եկել:

— Այո, գաւազ, ուղիղ է. պատասխանեցի ես լուրջ կերպով: Նրա կրծքից մի ուրախ ճիւղուրս թռաւ և երեխայի պէս սկսեց ծափ տալ, թռչկոտալ սենեակի մէջ և անդադար երգել. «Վիրգիլիոսը տուն կը գայ. իմ Վիրգիլիան տուն կը գայ»:

Աչքերս արտասուքով լցեցին և ես քաջութիւն չունեցայ հէնց նոյն բոպէին հաղորդել նրան ճակատագրական լուրը: Այդ բանը միւս օրն արի:

Բոլորովին գունաթափ, գլխիկոր, կարծես շանթահար եղած, նա մինչև վերջ լսեց իմ խօսքերը: Ես արտասուք ու հառաչներ ելի սպասում. բայց ոչ մէկը դրանցից: Միայն կուրծքն էր բաբախում ծանր յուզմունքից: Ես աշխատում էի սփոփել նրան. կանչեցի Բլանկային, որը ճանապարհեց նրան տուն, ուր սպասում էր նրա մայրը—Մարիան: Տեսնելով մօրը, Լիբիան

աղիողորմ ձայնով ընկաւ նրա գիրկը և գոչեց. —  
„սպանւած է, սպանւած է նա...“

Մարիան առնելով նրա պաղ ձեռքը, սկսեց շոյել քնքուշութեամբ և, մեղմ ձայնով ասաց:

— Ուշքի եկ. խեղճ աղջիկս. յիշի՛ր, որ այդ սոսկալի լուրը քեռի Պաւելին ևս պիտի հաղորդենք:

Լիբիան, այդ ուրախ ու անհոգ թիթեռնիկը, յաւիտեան կորցնելով իւր ուրախութիւնը, անտարբեր դարձաւ դէպի ամեն ինչ: Իւր վշտի առաջին բոպէներին իսկ, աշխատանքը չէր թողնում ձեռքից, բայց առաջւայ աշխոյժը և եռանդը չունէր այլևս: Նա յաճախ այցելում էր Պաւելին, որը իւր միակ սիրասուն գաւազի մահւան լուրը առնելուն պէս կաթլածահար էր եղել: Շաբաթները և ամիսները անցնում էին իրար ետևից. Լիբիան իւր փեսացւի կարօտն էր քաշում: Բոլորովին հրաժարելով պարերից և երեկոյթներից միշտ աշխատում էր առանձնանալ, բայց այդ նրան չէր յաջողում: Նա հարուստ հարսնացու էր: Սուգի տարին անցնելուն պէս, ամեն կողմից սկսեցին նրան առաջարկութիւններ անել: Բայց Լիբիան հաւատարիմ մնալով իւր սպանւած փեսացւին և յարբում մնալով իւր բոլորին էլ մերժեց: Ծեղկով նրա յիշատակը՝ բոլորին էլ մերժեց: Ծեղկով Պաւելն էլ, տեղական փեսացուների միջնորդներից նրան ազատելու համար, իւր կարողութիւնը դիմամբ չէր կտակում նրան: Կարողութիւնը դիմամբ չէր կտակում նրան: Այդպէս մի ամբողջ տարի անցաւ: Դաշտային



աշխատանքների ժամանակը եկաւ, և Լիբիան այլևս իւր վշտերով զբաղւելու միջոց չունէր:

Մի կիրակի, լուր տարածւեց, որ շուտով գիւղը պիտի գան Վիրգիլիոսի հետ միենոյն գումարտակում ծառայած երկու զինւոր, որոնք նոյնպէս մասնակցել էին Բօսնեայի ճակատամարտին: Լիբիան շատ էր ցանկանում տեսնել և խօսալ նրանց հետ, յուսալով, թէ մի գուցէ կարողանայ որ և է տեղեկութիւն ստանալ Վիրգիլիոսի մասին: Նա դեռ յոյս ունէր...

— Չքնաղ Լիբիա, մի՞թէ դու հաւատում ես այն առասպելին, որ իբր թէ Վիրգիլիոսը սպանւած է. ասաց զինւորներից մինը, ծիծաղելով:

— Առասպելեն—կրկնեց Լիբիան և մի հարցական հայեացք ձգեց նրա վրայ:

— Այո, առասպելեն:— Խեղճ աղջիկ, ի դուր ես տանջւում. դու դեռ երիտասարդ ես և կարող ես ուրիշին սիրել. իսկ մեր զինւորներիս սովորութիւնն է. «նոր գիւղ, նոր սէր»:

— Դրանով ինչ ես ուզում ասել:

— Այն, որ քո Վիրգիլիոսը բոլորովին առողջ է և ապրում է Բանեաշուկու իր Բօսնեացի սիրուհու հետ:

— Դու ստում ես, կտրուկ կերպով ասաց Լիբիան:

— Երդում եմ քեզ, որ ոչ, և ինչ շահ ինձ, ստելուց: Մի ամիս առաջ, ես իմ աչքով տեսայ, թէ ինչպէս Վիրգիլիոսը այցելում էր Բենեա-

շուկի առաջին գեղեցկուհի Ստանա Բելօբրիգովային:

— Դու ինքդ տեսա՞ր:

— Այո, ինքս:

— Ո՛վ Աստուած իմ, մի՞թէ նա կենդանի է: Դատաւորը ինքը կարդաց ինձ մօտ, որ նա սպանւած է:

— Ասա, ինչդեմ, լրագիր մրտողները, հարիւրաւոր վերստեր հեռու պատերազմի դաշտից, ինչ տեղեկութիւն ունեն: Ես հաւատացնում եմ քեզ, որ Վիրգիլիոսը Բենեաշուկում է: Լիբիան, վշտի հարածից անշնչացած, գետնին փռւեց: Նրան տուն տարան, որտեղ շուտով ուշքի գալով, բացատրեց իր ուշաթափւելու պատճառը, և կրկին գործի անցաւ:

Նա ոչ լալիս և ոչ էլ գանգատւում էր. նրա անվերջ տառապանքները արտայայտողը, միմիայն նրա երկու սևորակ աչքերն էին: Այն Վիրգիլիոսը, որին սիրում էր նա անհաս սիրով... մի՞թէ կարող էր դաւաճանել նրան:

Էլ այսուհետեւ ո՞ւմ համար պիտի ապրէր նա: Յուսահատ, նա մահ էր խնդրում Աստծուց:

Բայց գուցէ զինւորը խաբել է իրան: Մի՞թէ Վիրգիլիան այնքան անգուլթ է, որ իրան դաւաճանելով հանդերձ, նոյն իսկ հօրը ոչինչ չի յայտնում:

Դժբաղդ աղջիկը մի անգամ եկաւ ինձ մօտ և աղաչեց Վիրգիլիոսի մասին տեղեկութիւններ հաւաքել Բենեաշուկից: Անկարելի էր նկարագրել



նրա վիշտը և յուսահատութիւնը, երբ իրօք հաստատեց, որ Վիրգիլիոսը կենդանի է և ապրում է Բենեաշուկում, Ստանա Բելօգրիբովայի տանը: Թէ ինչ էր կատարւում այդ քնքոյշ արարածի հոգու մէջ այն բոլորին, երբ նա վճռեց անձնասպան լինել, այդ միայն Աստծուն էր յայտնի. կարծես մօր մեղքը, դուստրը քաւեց: Սրանից ուղիղ տասը տարի առաջ, Հոգեգալստի օրը, այդ քարաժայռի գագաթից վայրձգեց իրան Լիբիան: Երկու օրից յետոյ հովիւները գտան թշուառ աղջկայ մարմինը:

Տիրեց խորին լուսթիւն: Մեր հայեացքները ակամայից դարձան դէպի քարաժայռը, որի գագաթին մի ինչ որ մարդու կերպարանք էր երեւում: Մենք դատաւորին էինք նայում, կարծես լուռ հարցով:

— Այդ Վիրգիլիոսն է, ասաց նա: Ամեն տարի, Լիբիայի մահւան օրը, նա բարձրանում է այդ քարաժայռի գլուխը, և զարմանալու չէ, եթէ վաղ, թէ ուշ նա այդ բարձրութիւնից վայր նետէ իրան:

— Վիրգիլիոսն է այդ... խնդրում ենք, պատմեցէք նրա մասին. ճիշտ է արդեօք, որ նա դաւաճանել է իր հարսնացւին:

— Նա վտանգաւոր կերպով վիրաւորւած էր X...ի մօտ: Մեր զօրքերը պիտի նահանջէին պատերազմի դաշտից, վիրաւորւածներին թողնելով թշնամու վեհանձնութեան: Այդ միջոցին, մատաղահաս Բօսնուհի Ստանան իր ընկերու-

հիների հետ դուրս են գալիս պատերազմի դաշտը՝ վիրաւորւածներին օգնելու: Այնտեղ զբաղւում է նա արիւնաշաղախ Վիրգիլիոսին և հրամայում է միւս վիրաւորւածների հետ, նրան ևս տանեն իր տուն: Վիրգիլիոսը գլխից էր վիրաւորւած և երբ ուշքի է գալիս, չէ յիշում անցածը: Մինչև անգամ չի կարողանում, իր սով և որտեղացի լինելը ասել: Ստանան կարեկցում և խնամում էր երիտասարդ—գեղեցիկ զինւորին: Թշնամին հեռացել էր արդէն:

Վիրգիլիոսը թոյլ էր տալիս Ստանային, որ նա խնամէ իրեն նրա հոգեկան և ֆիզիքական ոյժերը վերականգնում են: Հենց այդ միջոցին Լիբիայի կողմից հարց եղաւ, թէ յիշաւի Բանեաշուկի մէջ է արդեօք ինքը: Լիբիայի անունը կայծակի լուսով լուսաւորեց նրա նսեմացած յիշողութիւնը. նա մտաբերեց ամբողջ անցեալը և ամեն ինչ ձգելով՝ սլացաւ դէպի հայրենիք: Բայց արդէն ուշ էր... Նրա բանականութիւնը խանարդէն էր և բոլոր ժամանակ երեակայում էր, թէ Հոգեգալստի օրը միայն պիտի գտնէ Լիբիայի խորտակած մարմինը հէնց այնտեղ, ուր ինքնասպանութիւն էր գործել այդ թշուառ աղջիկը:

Մենք բոլորս լուռ ոտքի ելանք: Հսկայ բնութիւնը իւր բոլոր վեհութիւնը և հմայքը կորցրեց մեր աչքում, երբ լսեցինք նրա ծոցում կատարուած սոսկալի անցքերի պատմութիւնը:

Հանդարտ և մտախոհ ճանապարհ ընկանք մենք դէպի տուն:



## ՀՐԴԵՅԻՈՂ ԿՂԶԻՆ

(Առի ԲՈՒՍԱՅՈՒՆԻ)

Ապստամբների հեծելազուհը յանդուգն ու նւիրւած առաջնորդի ղեկավարութեամբ սլանում էր դէպի թշնամու բանակը մըրկի արագութեամբ:

Մի պահ հանգիստ տալով ձիերին՝ հեծելազուհը նոյն թափով առաջ նետւեց, թողնելով յետեից «կեցցէ ազատ կուբան» բացականչութեան արձագանքը:

Զօրարշաւը իր ընթացքում աւելի ու աւելի առարկում էր, տարրերային, մոլեգին կերպարանք ստանում: Առաջի շարքերն արդէն թըշնամու բանակն էին ձեղքում և նստաւում հաւաքակողի գնդակներով:

Թշնամին թէև յանկարծակի էր եկել, բայց տեղի չտւեց, որքան ուժեղ էր, անզուսպ յարձակումը, նոյնքան յամառ էր անսասան դիմադրութիւնը: Նրա առաջի շարքերի յիրաւի, որպէս հետեակ, խողխողւեցին ապստամբների երկար սրերով և ոտնատակ գնացին. բայց յետագայ շարքերից տեղացող գնդակները խլեցին յարձակողներից շատերի կեանքերը:

Որքան վառ էր ու այրող հայրենիքի ազատութեան տենչը ապստամբների սրտերում, նոյն

քան պարզ էր ու կենդանի պատւի խնդիրը իսպանական զօրքի գիտակցութեան մէջ: Եթէ ապստամբները որոշել էին կռուել մինչև վերջին մարդը, կամ մեռնել ու կորչել կամ հայրենիքն ազատ տեսնել, իսպանական կառավարութիւնն ու զօրքը վճռել էին ջնջել կուբայ բնակչութիւնը, խեղդել ապստամբութիւնն ու նրա խիզախ ոգին:

Ամեն մէկը՝ հաւատարիմ իր գիտակցութեանն ու պարտքին՝ կռուում էր անձնագոհ, առանց մտածելու կեանքի ու մահւան մասին:

Յարձակողների շարքերը, թէև կրկնակի կորուստով, հասել էին արդէն թշնամու բժշկականամակալ խմբին (սանիտարնի օտրեադ):

Զգոյշ պահէք ձեզ, օրիորդ Ֆրիկետտա, — ասաց սպաններից մէկը, ծառի տակից դուրս եկող մի կնոջ:

— Թող լինի, ինչ լինելու է, պատասխանեց գլխութեան քոյրը թեթև զոդոցով և դիմեց բարձրացնելու վերաւոր գինւորին:

Մինչ այդ ապստամբների խումբը կատարելով իր սարսափելի գրոհը, մարդկային դիակներից կոյտեր կազմելով՝ անյայտացաւ հորիզոնի յետևում:

Դա կռիւ չէր, այլ կայծակնոտ կարկուտ, որ վայրկեանների ընթացքում հարւածեց հարիւրաւոր կեանքեր:

Փոթորիկն անցաւ, լուեց հրանիւթի շառաշիւնը, բայց օդը լի էր կսկիծով ու տանջանքով, մահն էր սաւառնում վիրաւորների վրայ յա-



գեցած նրանց ալ-արիւնով: Բժշկա-խնամող խումբը սկսեց հաւաքել վիրաւորներին, վէրքերը կապել և մեծ զգուշութեամբ տեղափոխել դաշտային հիւանդանոցը:

Դիակներին արանքում օրիորդ Ֆրիկետտան նկատեց ապստամբների առաջնորդին: Անբախտ երիտասարդը, որ մի քանի ըրպէ առաջ այնքանահաւոր ու հպարտ թուչում էր իր ձիով զօրագնդի առաջից, այժմ ընկած էր թեւատարած երեսնիվար: Ֆրիկետտան մօտեցաւ նրան: Նա դեռ չընչում էր. լայն բաց արեց աչքերը, որ լուսաւորեցին նրա դժգոյն դէմքը: Այլ ձեռքով նա բռնած էր սրի կոթը: Գնդակն անցել էր կրծքով, որից բղխած արիւնը ներկել էր բաձկոնակը:

Ֆրիկետտան ընկերոջ օգնութեամբ բարձրացրեց վիրաւորին, զգուշութեամբ պատռեց բաձկոնակն ու շապիկը և շօշափեց կուրծքը. կրծքի վրայ ուռոցք գտաւ, նշանակում է, զընդակը թափ չէր անցել, այլ մնացել էր կրծքում:

Անդամահատ դանակով Ֆրիկետտան ձեղքեց ուռուցքը և մատներով կրծքից հանեց գնդակը, որը ծակել անցել էր վիրաւորի աջ թոքը: Ապա բժշկական պահանջների համաձայն կապեց վէրքը:

Վիրաւորը խորը շունչ քաշեց և դժւարութեամբ մրմնջաց.

Շնորհակալ եմ. նրա դէմքը մի արտայայտութիւն էր ընդունել, որ ցոյց էր տալիս, թէ նա մի այլ մաքով էր տարւած. և նա աւելացրեց. — զթութեան քոյր, ազատեցէք և իմ բրոշը:

Այդ պահին մօտենում էր նրանց Դօլօրէս Վալիենտը: Քոյր և եղբայր, Դօլօրէս և Կարլոս Վալիենտները, Կուբայի ազատութեան գլխաւոր հերոսներից էին, նրանք իրենց անվախ ու յանդուգն և փոթորկալի արշաւներով լուրջ վտանգ էին սպառնում Իսպանական կառավարութեան:

Դօլօրէսը յարձակման հէնց սկզբին վիրաւորւել էր ձեռքից. բայց կարողացել էր մնալ ձիու վրայ և ընկերների հետ առաջ գնալ: Եւ երբ Կարլոսը՝ Թշնամու ծով բազմութիւնը ալեկոծելիս ու իրար տալիս՝ վերջապէս գետին է գլորւում գնդակի զօրեղ հարւածից, նոյն պահին էլ Դօլօրէսի ձին է գետին շարտւում և ձիաւորին փռում գետին:

Դօլօրէսը հարւածի թափից միայն ուշագնաց է լինում և բարձրանալով ոտքի՝ տեսնում է եղբօրը, և գալիս դէպի նա:

Ֆրիկետտան կապում է և Դօլօրէսի թիւը, որի համար ընդունում է Կարլոսի կրկնակի շնորհակալութիւնը:

Կարլոսն յայտնում է, թէ մարդկութիւնը երախտապարտ է ֆրանսիացի այդ կնոջը, որը անձնւիրութեան վեհ գաղափարի սքանչելի և անօրինակ մարմնացումն է, թէ նրա անուընդ որպէս զթութեան քոյր տարածւած է ամեն տեղ, որովհետեւ նրա հոգացող ձեռքը պատերազմի դաշտում ազատում և շունչ է տալիս ամենքին առանց ազգի ու ցեղի խտրութեան:



Մինչ այդ՝ իսպանական զօրքի հրամանատարը յետ է դառնում և մօտենում բժշկա-խնամակալ կէտին:

Զինւորները ճանաչում են տպատամբներին ու կոչում «թող կորչեն խռովարարները»:

Հրամանատարն ինքն է առաջ գալիս և ատրճանակն ուղղում դէպի վիրաւորները:

Յրիկետտան առաջ է նետւում ու կանգնում վիրաւորների հանդէպ:

— Հեռացէ՛ք մի կողմ—խրոխտաբար յայտնում է հրամանատարը:

— Քանի ես կենդանի եմ, դուք իրաւունք չունիք ձեռք տալ սոցա,— հաստատուն ձայնով ասում է Յրիկետտան:

Սպայի դէմքը կարծես փոխւեց, և նա մեղմ ձայնով խօսեց. — Մի խառնէ՛ք ուրիշի գործին, քոյրիկ. հեռացէ՛ք ասում եմ վերջին անգամ, ինքներդ կրնկնէ՛ք և չէ՛ք ազատի ոչ ոքի:

— Ես պատրաստ եմ մեռնելու. կրակեցէ՛ք, պատասխանեց համոզւած և համարձակ ձայնով Ֆրանսուէին, նայելով ձիաւորի փայլատակող աչքերին: Դէհ շուտ, սպանեցէ՛ք ինձ— ի՛նչ էք դանդաղում. դուք անպաշտպանների ստոր դահիճներ...

Սպան անէծքով բարձրացրեց ատրճանակը, նշան բռնեց և կրակեց:

II

Սպան կատաղած էր և այլայլւած. նրան էին յառել Յրիկետտայի սուր ու ծակող հայեացքը. սպան դողում էր ամբողջ մարմնով. այդ էր երևի պատճառը, որ նրա գնդակը վրիպեց և Յրիկետտան ողջ մնաց:

Սպան դառնալով զինւորներին՝ հրամայեց կրակել: Զինւորները չկրակեցին անպաշտպաններին, ասելով, թէ իրենք զինւոր են և ոչ մարդասպան. սպանել և այն էլ սով. Յրիկետտային, այդ ֆրանսիացի կնոջը, որը հազարաւոր կեանքեր է փրկել և շատերը հէնց այդ զինւորներից պարտական են նրան իրենց կեանքով:

Զինւորների մերժումը կարծես սթափեցրեց սպային, որ ըռպէսպէս կուրացել էր կրքից և չգիտէր, թէ ինչ էր անում. նրա մէջ զարթնեց ըռպէական քնած ասպետական ոգին և նա մեղմացած չմերժեց նոյն իսկ Յրիկետտայի խնդիրը ոչ միայն չսպանել այդ վիրաւորներին, այլ և հնարաւորութիւն տալ հիւանդանոց հասցնել նրանց...

Յրիկետտան չորս զինւորի օգնութեամբ՝ պատգարակի վրայ դրած վիրաւորներին՝ տարաւ մինչև հիւանդանոցային սայլը. սայլով փոխադրեց երկաթուղին, որ գնում էր Կուբայի Հաւանա մայրաքաղաքը:



Ճանապարհին զինւորները պատմում էին, թէ ինչպէս կարուս Վալիենտը և նրա քոյրը վեհանձն են եղել դէպի իրենց, դէպի ամեն մի անպաշտպան ու վիրաւոր զինւոր. ճիշտ է, նրանք գիտեն առիւծաբար մարտնչել հակառակորդի հետ, նրանց արշաւները սարսափելի կոտորածներ են տալիս, բայց այդ այն դէպքում, երբ թշնամին զինւած է, ուժեղ, և մարտնչող: Քանի քանի անգամ գերի ընկած, կամ ճանապարհին թուլացած ու վիրաւոր զինւորներին նրանք կամ ազատ արձակել են տուն, կամ խնամել ու առողջացրել:

Գնացքը դեռ չէր հասել քաղաք, բայց կարլուսի ու Դոլորէսի գերի ընկնելու լուրը տարածւել էր ամեն տեղ: Մեծ բազմութիւն էր հաւաքւել կայարանում տեսնելու կուրծայի եղակի հերոսներին:

Այդտեղ ժողովուրդը հետաքրքրութեամբ, բայց ոչ առեւութեամբ էր դիտում հերոսներին: Սիրով ընդունեց հերոսներին նաև հիւանդանոցի գլխաւոր բժիշկը:

Վիրաւորներին հիւանդանոցում տեղաւորելուց, վէրքերը կապելուց յետոյ՝ Փրիկետտան գնաց հանդատանալու, որ այնքան անհրաժեշտ էր, որին նա այնքան կարիք ունէր:

Հագիւ Փրիկետտան հանգիստ էր առել մի քառորդ ժամ, երբ հիւանդանոցի ծառան յայտնեց, նրան թէ հիւանդներից մէկը, որ բռնւել էր

դեղին դողոցքով, մեռել է երեք ժամ առաջ, որի դիակը նա կարող է տեսնել:

Փրիկետտան նպատակ էր դրել ուսումնասիրել դեղին դողոցք կոչւած հիւանդութեան մանրէն (միկրոբը), որ անագին զոհեր էր տանում եւրոպայում: Այդ ուղղութեամբ Փրիկետտան կատարել էր որոշ քայլեր և աշխատում էր գտնել այդ հիւանդութեան պատւաստման կամ բժշկութեան միջոցը:

Այդ նպատակով նա օգտւում էր ամեն յարմար հանգամանքից և ձեռքից բաց չէր թողնում ոչ մի դէպք, որքան էլ յոգնած կամ տանջւած լինէր:

Փրիկետտան այս անգամ էլ օգտւեց դէպքից, վեր ելաւ տեղից, թէև դժւարութեամբ, քանի որ ջաղւած էր զգում իրեն, և ուղևորւեց դէպի անգամահատութեան սենեակը, ուր մեռածի դիակն էր դրւած:

Այն վայրկեանին, երբ մեռելի շորերը քանդել էր և ուզում էր անգամահատ դանակով ճղել նրա փորը, Փրիկետտային թւաց, թէ մեռածը շարժւում է:

Նա առանց շփոթւելու վերցրեց նաշաղիրի սպիրտը և մօտեցրեց մեռածի քթին: Մեռելը յիւրաւի շարժումներ գործեց, կուրծքը բարձրացաւ, մի քանի վայրկեան ևս և նա բարձրացաւ տեղից:

Մեծ էր Փրիկետտայի և՛ զարմանքը և՛ ուրախութիւնը: Նա կարգադրեց հիւանդին կրկին տանել իր տեղը և խնամել:



Հիւանդը ֆրանսիացի նաւաստի էր, Ֆրանսիայի Պրովանսալ գաւառից, մի մարմնեղ, ուժեղ ու կենսուրախ երիտասարդ. սա որպէս երախտագէտ մարդ առողջանալուց յետոյ դարձաւ Ֆրիկետտայի անբաժան ընկերն ու պաշտպանը: Նրա անունն էր Մարկոս Կաբուֆիդ: Մարկոսն օգնում էր Ֆրիկետտային և նրա սովորական ու գիտական աշխատանքների ժամանակ, կատարելով ծառայի դեր:

|||

Անցաւ երեք շաբաթ նկարագրած սոսկալի զօրարշաւի օրից: Ֆրիկետտայի վարժ ձեռքն ու փորձաւոր խելքը կատարում էին շատ բան, գործում էին հրաշք: Դօլօրէսն ու Մարկոսը կատարելապէս առողջացել էին: Կարլոսը, որի վերքը համարւում էր անբուժելի և ոչ մի յոյս չէր տալիս առողջանալու, այժմ այնքան լաւացել էր, որ նա կարողանում էր հանգիստ խօսել, քիչ ման գալ, ուտում էր ախորժակով և օրէցօր դէպի աւել գնում:

Ֆրիկետտայի իսկական անունն էր Ամելի Ռաբերտ, նա ուսումնասիրել էր բժշկութիւն և ապա դարձել զինւորական բժիշկ երեք պատերազմի ընթացքում. մէկ ճապոնական կռիւի ժամանակ, մէկ ֆրանսիական զօրքում Մադագասկար կղզու յայտնի դէպքերի առթիւ և մէկ էլ Հաբէշտանի թագաւոր Մենելիքի զօրքում հարեշտանի նշանաւոր կռիւներին:

Ահա թէ ուր էր իր փորձառութիւնը ձեռք բերել Ֆրիկետտան և թէ ինչո՞ւ նրան ճանաչում, յարգում էին և նրանից ակնածում ամեն տեղ:

Եւ երբ սկսեց Կուբայի ապստամբութիւնը, եւրոպական երկու խոշոր թերթ Ֆրիկետտային հրաւիրեցին որպէս թղթակից, իսկ Կարմիր խաչի ընկերութիւնը նրան իր աշխատակիցների թրւում ընդունեց և ճանապարհեց Կուբա. այդտեղ Ֆրիկետտան օգնութեան էր հասցնում առանց խտրութեան ամենքին, ինչպէս վայել է բարեկիրթ ու անձնէր մարդու:

Նա առանձին ուշք էր դարձնում և իր բացարձակ հովանաւորութեան տակ էր առել Կուբայի հերոսներին, Կարլոսին և Դօլօրէսին, որովհետեւ դրանց զրութիւնը կրկնակի վտանգաւոր էր: Ոչ միայն նրանց վերքերն էին սպառնալի, նրանց զլխին կախած էր և պատժի սպառնալիքը: Այդ պատճառով Ֆրիկետտան ապրում էր նրանցից համարեա անբաժան:

Մի անգամ Ֆրիկետտան, Դօլօրէսն ու Կարլոսը հիւանդանոցի պարտիզում նստած զրոյցի էին բռնւած, երբ մօտեցաւ նրանց Մարիոսը և յանձնեց՝ կողմնակի դիտողի համար աննկատելի կերպով՝ Ֆրիկետտային մի նամակ, հետեւեալ բովանդակութեամբ, որ ուղղւած էր Կարլոսին.

«Դնդապետ Կարլոս, ձեր անկեղծ բարեկամը շատապէս է զգուշացնել ձեզ և օրհորդ Դօլօրէսին, զուք համարեա առողջացել էք: Ծառով կրտանեն ձեզ պատերազմական նաւով Յէուտու



և կրփակին բանտում, ուր առանց դատի տառապում են ձեր ընկերներից շատերը: Իսկ ձեր քրոջը ենթադրում է տանել Իսպանիա և այնտեղ բանտարկել: Այդ որոշումը, եթէ չի ստորագրւած, շուտով կըստորագրւի: Զգուշացնելով ձեզ այդ մասին ես երախտագիտութեան իմ պարտքն եմ կատարում: Արէք, ինչ հարկաւոր էք համարում»:

#### IV

Կուբան Անտիլեան կղզիներից ամենամեծն է. այդ կղզին առաջին անգամ Կոլումբոսը գտաւ 1492 թ.: Այժմ այդտեղ ապրում է մէկ ու կէս միլիոնից աւելի ժողովուրդ. նրա հիմնական բնակիչները խափշիկներն են (նեգրերը), որ մինչև 1886 թ. ստրկական զրութեան մէջ էին: Այդ թւականից Կուբա կղզին գաղթեցին և շատ չինացիներ:

Եւրոպացիները գաղթելով Կուբա կղզին՝ ոչ միայն խլեցին ու տիրեցին խափշիկների հողերին ու գոյքին, այլ և ստրկացրին նրանց: Խափշիկների ստրկական զրութիւնը դարերի ընթացքում եւրոպացիների մէջ առաջ էր բերել «գունաւոր նախապաշարմունք» կոչւած երևոյթը: Այսինքն բոլոր սևերը ոչ միայն զրկւած էին ընչքից ու մարդկային տարրական իրաւունքներից, այլև ատւած ու արհամարհւած էին եւրոպացիներից: Աւելին ևս. բացի զուտ սևերից անարգւած էին

նաև խառն ամուսնութիւններից ծնւածները. մի խօսքով ում մէջ կասկածէին «սև»-ի արեան կաթիլ լինելուն, նա զրկւում էր «մարդ իրաւունքից»:

Թէ ինչ ծայրայեղութեան էր հասնում «գունաւոր նախապաշարմունքը», երևում է հէնց այն բանից, որ ով չկարողանար հաստատել իւր «զուտ սպիտակ» ծագումը, նա իրաւունք չուներ Կուբայի մայրաքաղաքի—Հաւանի որոշ փողոցներով կառքով գնալ:

Անա տասներկու տարի է, ինչ տեղի է ունեցել ստրուկների ազատութիւնը, բայց դեռ թագաւորում է այնտեղ «գունաւոր նախապաշարմունքը»:

Փրիկետտան, առատ երկրի զաւակը, չէր կարող տանել, անշուշտ, նման երևոյթներ և, երբ լսում էր կամ ներկայ էր լինում նման դէպքերի, նա կորցնում էր իրեն արդար յուզմունքից և պատրաստ զգում կուել այդ ճիւղի անարդարութեան դէմ իր ամբողջ էութեամբ:

Նա պատահմամբ լսեց, որ Կարլոսը Դօլօրէսի հարազատ եղբայրը չէ: Նրանք հօրով մէկ, մօրով ջով էին: Կարլոսի մայրը խափշիկ էր փղել: Այս հանգամանքը աւելի ևս կապեց Փրիկետտային Կարլոսի հետ: Եւ նա որոշեց գերիններին փախցնել ու ազատել:

Փախուստը շատ դժւար էր. Հաւան քաղաքը զինւորական զրութեան մէջ էր յայտարարւած. հսկողութիւնը խիստ մեծ էր: Փախուստի երկու ճանապարհ կար—ծովով և երկաթոգով: Ծովը



մօտ էր. հիւանդանոցը հէնց ծովի ափին էր, բայց հետախոյզ նաւակները շարունակ շրջում էին ծովի ափին, և դադարել էր սովորական երթևեկութիւնը:

Երկաթուղով փախչելը կրկնակի անապահով էր: Դրա համար պէտք էր անցնել ամբողջ քաղաքի միջով, ուր զինուորական դրութեան պատճառով ամեն քայլափոխում պահակների խմբերի կարելի էր հանդիպել. բացի դրանից չկար մարդատար գնացք. երկաթուղին միայն զօրք էր տեղափոխում:

Նամակի ստացած օրից քաղաքի այն մասում ուր կային մեծ թւով քաղաքական յանցաւորներ՝ հակողութիւնը ծայր աստիճան մեծացել էր. մանաւանդ հիւանդանոցում: Մի պարզկայ գիշեր Փրիկետտան լարւած ուժերով վերջացրեց իր այնքան դժւար աշխատանքը և դուրս եկաւ թարմ օդի մէջ գրօնելու: Մի քանի քայլ էր հեռացել հիւանդանոցից, երբ նրան կանգնացրեց գիշերապահ զինուոր:

Հրամայած էր ոչ ոքի դուրս չթողնել: Այս դէպքը խիստ ազդեց Փրիկետտայի վրայ, որն իրեն բանտում էր զգում:

Նա այդքան երկար ու բարակ չմտածեց, կարճ ժամանակից յետոյ ամեն պատրաստութիւն տեսաւ և յայտնեց կարլոսին, թէ անպայման փախչելու են, որի համար նա արել է, ինչ հնարաւոր է եղել:

Ամեն գաղտնիք յայտնի էր և Մարիուսին, որը

չէր կարող չմասնակցել այդ փախուստին: Որոշեց, որ ճանապարհին Ֆրիկետտան կօգնէ Դօլօրէսին իսկ Մարիուսը կարլոսին:

Երբ վրայ հասաւ գիշերը, Փրիկետտան քիմիական բաղադրութիւնների օգնութեամբ խափշիկի գոյն տւեց իր և Մարիուսի դէմքին, ապա Մարիուսի հետ միասին մտան կարլոսի մօտ, ուր սպասում էին նրանց կարլոսն ու Դօլօրէսը. այնտեղից չորսը միասին անցան մեռելի սենեակը. այդ սենեակից սկսւում էր կոյուղու անցքը, որ գետնի տակով տանում էր ծովը: Ամենայն դպուշութեամբ մտան կոյուղու խիստ նեղ անցքը, որը կրկին փակեցին, ու մեծ դժւարութեամբ, զարշահոտութիւն շնչելով՝ դուրս եկան ծովը: Չորսն էլ լող տալ գիտէին. բաւական առաջ գնացին ծովի մէջ լող տալով:

Մարիուսին յաջողեց մի նաւակ գտնել, որի պահապանին նա ծովը ձգեց դիմադրութեան համար: Այդ նաւակով նոքա հասան երկաթուղու կայարանը, մաքսատան պահապանը ապրտամբների գործակալն էր:

Ապստամբները ամեն մի կարևոր գծի վրայ ունէին իրենց մարդիկը, որոնք պետական ծառայութեան մէջ էին և գաղտնի գործակալի դեր էին կատարում ապստամբութեան գործի մէջ: Դրանց միջոցով կառավարութեան ամեն մի շարժում, կարգադրութիւն ու գաղտնիք յայտնի էր լինում ապստամբներին: Դրանք օգնում էին ապստամբներին և ուրիշ շատ գործերում:



Մեր փախստականները այդ գործակալի օգնութեամբ անցան կայարանը, փոխեցին շորները: Կարլոսը հագաւ հասարակ զինւորի շորեր կապեց ձախ աչքը և ստացաւ զինւորի անհրաժեշտ գէնք ու իրեր: Ֆրիկետտան ու Դօլօրէսը հագան գեղջուկի շորեր: Բոլորն էլ շորերի տակ զինւեցին: Այդ հագուստով նրանց ճանաչել անկարելի էր:

Շուտով կայարանը կենդանութիւն ստացաւ. այդ գնացքով տեղափոխւելու էին պատերազմական միջերը և զօրք: Շատերն եկել էին ճանապարհ ձգելու իրենց եղբայրներին ու ամուսիններին և գնալու էին մինչև հետեւեալ կայարանը:

Գնացքի մէջ Ֆրիկետտայի կողքին նստեց դեռահաս մի տիկին երեխան գրկին, նրա դիմաց տեղաւորւեց նրա ամուսինը՝ մի երիտասարդ սպայ, իսկ նրանց շուներ մտաւ թախտի տակ: Կինը ճանապարհ էր ձգում մարդուն գէպի պատերազմի դաշտ, նա արտասուակալ աչքերով անյադ նայում էր ամուսնուն, իսկ սա շոյում էր երեխայի գլուխը առանձին քնքշութեամբ:

Մինչև այդ, գնացքը լցեց ոստիկաններով, որոնք ուշի ուշով նայում էին համարեա ամեն մի ճանապարհորդի: Ֆրիկետտան ճանաչեց հիւանդանոցի ծառաներից մի քանիսին, որոնք նոյնպէս փնտրուում էին մէկին: Այդ նշան էր, որ նրանց փախուստն արդէն յայտնի էր եղել և ձեռք էր առնւած միջոցներ ձերբակալելու: Սակայն

իզուր. ոստիկանութեան փնտրտումներն ապարդիւն անցան:

Վերջապէս գնացքը շարժւեց և վտանգն առայժմ անցաւ: Դեռ չհասած հետեւեալ կայարանը գնացքը խորտակւեց ումբի պայթումից և սկսեց կատաղի հրացանաձգութիւն: Այդ ապստամբներն էին, որ արձակեցին գնացքի վրայ ռազմամիջերը ոչնչացնելու նպատակով: Հրացանաձգութիւնը շարունակւեց բաւական ժամանակ, որովհետև գնացքի միջի զօրքը պատասխանում էր յարձակւողներին:

Բոպէ առ բոպէ սպանւածների թիւը գնացքի մէջ բազմապատկոււմ էր: Շատերի թւում սպանւեց երիտասարդ սպան իր կնոջ հետ. իսկ երեխային գրկեց ու պաշտպանեց Ֆրիկետտան:

Կարլոսը տեսաւ, որ իզուր արին է թափւում, արձակեց աչքից սպիտակ թաշկինակը և լուսամուտից սկսեց ծածանել: Դադարեց հրացանաձգութիւնը յարձակւողների կողմից. դադարեց և զօրքը կրակելուց:

Յարձակւողների հրամանատարը առաջ եկաւ և հրամայեց իսպանական զօրքին ազատ բաց թողնել, իսկ գնացքը ռազմամիջերքով ոչնչացնել:

Մեծ էր յարձակւողների ուրախութիւնը առանձնապէս Կարլոսի և Դօլօրէսի ազատութեան համար, որոնց մեռած էին համարում, և ազատութեան միտքը ոչ ոքի գլխով չէր անցնում:

Յարձակւողների հրամանատար Անտոն Մասէօն իր խորին գոհունակութիւնը յայտնեց Ֆրի-



կետտային և Մարիուսին նրանց անձնագոհ այդ մեծ գործի համար:

V

Անտոն Մասէօն յաղթական արշաւով վերադարձաւ բանակատեղին, վերցնելով իր հետ Կարլոսին և նրա ընկերներին: Ֆրիկետտան տարաւ իր հետ ազատած երեխային և նրա շանը, որը չէր բաժանուում իր փոքրիկ տիրոջից:

Նրեխան երկար լաց լինելուց թուլացել էր. նրա ձայնը կտրւել էր, այժմ էլ միայն հեծկլտում էր նա և կանչում հօրն ու մօրը, յաճախակի մօրը: Նրա թոթովանքից ֆրիկետտան հասկացաւ, որ նրա անունն է Պաբլօ, իսկ շան անունը Բրավօ:

Դեռ նոր էին հասել բանակատեղին և քիչ հանգստացել, երբ լուր հասաւ, թէ իսպանական զօրքը գալիս է նոր ուժերով:

Ապստամբները թւով քիչ լինելով պարտիզանական կռիւներ էին վարում իսպանական զօրքի դէմ: Անտոն Մասէօն, ապստամբութեան ընդհանուր ղեկավարը, իր ձեռքի տակ ունէր 3000-ից ոչ աւելի մարտիկներ: Ապստամբութիւնն սկսւել էր 1895 թւի փետրւարի 24-ին, և այդ օրից ազգամիջեան կռիւը հրդեհել էր դժբախտ կղզին:

Ապստամբութեան զրդապատճառը շատ արդարացի էր ու տեղին. ապստամբները պահանջ

ջուր էին իրաւունքի և պարտականութեան հաւասարութիւն բոլոր քաղաքացիների համար առանց խտրութեան ցեղի ու գոյնի:

Նրանք խնդրում էին, որ սեւերը, դրանց թւում նաև չինացիները, զուրկ չմնան մարդկային տարրական իրաւունքներից:

Իսպանական կառավարութիւնը կոպիտ ուժով ուզում էր խեղդել ապստամբութիւնը և չբաւարարել այդ պահանջները:

Ապստամբների արդար դատը սակայն արձագանգ էր գտել Հիւսիսային Ամերիկայում, որը օգնում էր նրանց ամեն եղած միջոցով. փողով, զէնքով, ռազմական մթերքով և նոյն իսկ քաղաքագիտական ճնշումով: Այդ էր պատճառը, որ ապստամբութիւնը ոչ միայն չէր մարում, այլ գնալով աճում էր ու լայնացնում իր շրջանը:

Ամերիկայի աջակցութեան շնորհիւ լաւ էր կազմակերպւած ապստամբների և՛ բժշկական օգնութեան գործը, որ ֆրիկետտայի զարմանքը յարուցեց: Գլխաւոր բժիշկն էր Սերանօն Մասէօի անձնական բարեկամը և Կուբայի անկախութեան համոզւած պաշտպանը:

Անտոն Մասէօն թէև գիտէր, որ իսպանական զօրքը միշտ էլ մեծաքանակ ուժով էր գործում, այնուամենայնիւ յարմար ըուպէին չէր խուսափում դէմ առ դէմ ճակատամարտել նրա հետ, նոյնիսկ Հաւանի զարգասների մօտ:

Նրան լուր տւին, թէ թշնամու զօրքը գալիս է գնդապետ Ագաիլարի-Վեգայի առաջնոր-



դուժեամբ: Այդ լուրը առանձին աշխուժ տւեց Մասէօին. վերջապէս նրան վիճակուում է չափել իր ամբարտաւան, նենգ ու չարամիտ հակառակորդի հետ, որին ոչ միայն նա, այլև իւրայինները ատում էին, որպէս անբարտաւան մարդու:

Մինչ Անտօն Մասէօն պատրաստում էր կարգադրութիւններ անել զիմաւորելու թշնամուն, Կարլոսը մօտեցաւ նրան և խնդրեց, որ պատէր տրւի զինուորներին խնայել գնդապետ Ագվիլարի-Վեգայի կեանքը:

Թէև տարօրինակ էր այդ խնդիրը և անտեղի, մանաւանդ որ Ագվիլարի-Վեգան Կարլոսի անձնական թշնամին էր, սակայն Մասէօն ինկատի առաւ Կարլոսի խնդիրը, որին անչափ սիրում էր և որին մեռած էր համարում, բայց կենդանի գտաւ:

Մասէօն իր գունդը երկու մասի բաժանեց ու շարժեց թշնամու դէմ: Սկզբում զօրարշաւն յաջող էր ու արագ. թշնամու առաջապահ գրնդերը տեղի տւեց ապստամբների գրոհին. բայց իսպանական միջին բանակը գործում էր ուժեղ ու հաստատուն: Ապստամբներից շատերն ընկան թշնամու կարկուտի նման տեղացող կրակից. առաջ շարժւել անկարելի էր: Այդ բանը կատաղացնում էր Մասէօին. և նա հրամայեց ամերիկական թեթև, զինամիտային թնդանօթներն ի գործ դնել:

Մինչ այդ Մարիուսը՝ կանգնած բժշկա-խնամալ կէտում ֆրիկետտայի հետ՝ դիտում էր թըշ-

նամու բանակը: Նա նկատեց այդտեղ մի ձիաւորի, որն առանձին բաւականութեամբ ու զոռոգ շարժումներով խաղացնում էր իր ձին բանակի առաջ, և որը, ասես, հարսանիքի էր պատրաստում և ոչ կուխ: Նրա այդ ամբարտաւան վեքաբերմունքը հանեց Մարկուսին դիտողի դերից, և նա նշան բռնեց այդ ձիաւորին. մեծ էր նայողի զարմանքը, երբ զինւորականի ձին ծառսեղաւ և թեք ուղղութեամբ գլորւեց գետին՝ տանելով իր հետ և ձիաւորին. նրանց միջի տաքածութիւնը կըլինէր մօտ երկու հազար մետր: Մարիուսն ինքն էլ զարմացաւ այդ յաջողութեան վրայ, սակայն իրեն յատուկ պարծենկոտութեամբ բացականչեց. «Տես, այդպէս կըպատժեն ամբարտաւանին»:

Մարիուսին խիստ յուզեց և մի այլ հանգամանք, կուբացիները թէև սկսեցին թնդանօթները գործ դնել, բայց չէին կարողանում նշանին բռնել. զինամիտ-ռումբերը կամ չէին հասնում թշնամուն կամ անցնում էին նրա վրայով: Այն ինչ թշնամին հատ-հատ խլում էր ումբաձիգներին: Մարիուսի արիւնը գլուխը թռաւ և նա մօտ վազեց, նշանն ուղղեց և հրամայեց արձակել, զինամիտ-ռումբը առաւ բանակի ուղիղ մէջ տեղը և աւերած գործեց, նոյն կերպ յաջող անցան և նրա երկրորդ և երրորդ նշանները, ցրւեց թշնամին, զիմեց փախուստի: Յաղթութիւնը կատարեալ էր: Ապստամբները հալածեցին թշնա-



մուն և վերցրին մեծ քանակութեամբ ռազմամթերք:

Անտոն Մասէօն ի նշան խորին երախտագիտութեան պարգևեց Մարիուսին իր սուրբ:

# VI

Մարտինիկա կղզին Փրանսիական գաղութ էր, այդ կղզին երկու անգամ անցաւ անգլիացիների ձեռքը. Փրանսիացիք, որ մի ժամանակ իրենց միակ մրցակից ու հակառակորդ էին համարում անգլիացիներին, ժառանգաբար որոշ ատելութիւն էին տածում դէպի նրանց: Մարտինիկայի Փրանսիական գաղութը չուզեց ճանաչել անգլիական իշխանութիւնը և գաղթեց մասամբ Միացեալ Նահանգները (հիւսսային Ամերիկա), մասամբ Կուբա կղզին:

Իսպանական իշխանութիւնը սիրով ընդունեց Փրանսիացիներին Կուբայում, տւեց նրանց կատարեալ ազատութիւն զբաղելու շաքարագործութեամբ և այլ արդիւնաբերութեամբ:

Կարլոս Վալիեստի նախնիքը Փրանսիական այդ գաղութից էին: Նրա հայրը Կուբա գաղթելիս կարողացաւ մեծ քանակութեամբ հող ձեռք բերել և ստեղծել մի գեղեցիկ ու հարուստ կալւածք:

Վալիեստ ընտանիքի հարեան էր Ագվիլարի-Վեգա իսպանական հարուստ ընտանիքը: Այս երկու ընտանիքը, թէև տարբեր ցեղերից, բայց մօտիկ

յարաբերութեան մէջ էին միմեանց հետ, նրանց բարի հարեանութիւնը շարունակեց մինչև 1872 թիւը: Նոյն տարին սկսեց Կուբայի առաջին ապստամբութիւնը: Կարլոսի հայրը յայտնի սառնութիւն էր ցոյց տալիս դէպի Իսպանիան. այդ բանը նկատում էր նրա հարեան Մանւէլ Ագվիլարի-Վեգան, որին դուր չէր գալիս բարի հարեանի սառն վերաբերմունքը դէպի Իսպանիան: Այդ տեղից սկսեց և նրանց հարեանութեան մէջ ծագել ստուռութիւն:

Մի տարի յետոյ Վալիեստը ազատութիւն տւեց իր խափշիկ ստրկուհուն և ամուսնացաւ նրա հետ: Այդ բանը անպատուութիւն էր համարւում տեղային արիստոկրատ, ազնական դասակարգի համար, և ամենից աւելի դիպաւ Ագվիլարի քէֆին:

Այդ ամուսնութիւնից ծնւեց Կարլոսը, որի կեանքը մահ պատճառեց մօրը: Կարլոսի հայրը ամուսնացաւ Ագվիլարի հեռու ազգական մի կնոջ վրայ: Այս ամուսնութիւնից ծնւեց Դօլօրէսը:

Կարլոսի հօր երկրորդ ամուսնութիւնը նորոգեց Վալիեստ և Ագվիլար ընտանիքների հին կապերն ու բարեկամութիւնը:

Կարլոսի խորթ մայրը թէև զուրկ չէր գունաւոր նախապաշարմունքից, բայց սիրում էր Կարլոսին և պահում ու պահպանում նրան, ինչպէս հորազատ մայր: Կարլոսը շնորհիւ իր խորթ մօրը մոռաք էր գործում ազնական ընտանիքները և խաղում նրանց երեխաների հետ:



Կարլոսը ամենից շատ կապուցեց Մանւէլ Ագվիլարի միակ աղջիկ Կարմենի հետ, միշտ նրա հետ էր խաղում, նրա հետ անցկացնում իր օրնս։ Կարմենի ազդեցութիւնը մեծ էր Կարլոսի վրայ։ Կարլոսը, որ չէր սիրում կարգալ ու գրել, որ առանձին փափագով ու սիրով որսի էր գնում կամ սարերը բարձրանում, Կարմենի յանդիմանութիւնից ստիպւած՝ սկսեց ուսման նւիրւել։

Կարմենի և Կարլոսի երեխայական բարեկամութիւնն ու ընկերութիւնը հասակի համեմատ տարեցտարի աճեց և փոխւեց սիրոյ։

Նրանք իրար խօսք տւին ամուսնանալ և մնալ անբաժան ընկեր մինչև մահ։

Կարլոսին անհրաժեշտ էր բարձրագոյն կրթութիւն ստանալ և նա անցաւ Եւրոպա, յաջողութեամբ վերջացրեց ու դարձաւ տուն։

Եւրոպական կրթութիւնը և շրջանը խոր ազդեցութիւն էին թողել նրա վրայ. նա աճել ու մեծացել էր և մարմնով։ Այժմ նա լուրջ, համեստ ու խոհուն երիտասարդ էր, կատարեալ պատրաստ կեանք մտնելու։

Կարմենի հետ տեսակցելուց յետոյ կապած պայմանի համաձայն, Կարլոսը ներկայացաւ նրա հօրը և խնդրեց Կարմենի ձեռքը։ Մանւէլ Ագվիլարի համար դա սարսափելի հարւած էր, նրա մտքով անգամ չէր անցնում, թէ ծագումով սե երիտասարդը համարձակութիւն կունենար նման խնդրով իրեն դիմել։ Դա մեծ անպատուութիւն էր և նախատինք։ Նա կատաղած՝ մտրակով խփեց

Կարլոսի երեսին և հայհոյանքով դուրս արեց։ Կարլոսն, ինչպէս վայել է բաբեկիրթ մարդու, չպատասխանեց կռաւիտ ուժով այդ վայրենի գազանին և հանդարտ դուրս եկաւ։ Չէ՞ որ նա Կարմենի հայրն էր, իսկ Կարմենին Կարլոսը սիրում էր անհուն սիրով։

Տուն դարձաւ Կարլոսը և պատմեց եղբւրթիւնը ամենայն ճշտութեամբ հօրը։ Հայր Վալիենտը ուզում էր մենամարտի կանչել Մանւէլ Ագվիլարին այդ անպատուութեան համար։ Սակայն Կարլոսը բացատրեց, որ մեղաւորը միայն Ագվիլարի-Վիգան չէ. չարիքն աւելի խոր է ու մեծ. այդ նախապաշարմունքը ծնունդ է առել ժամանակակից հասարակական կարգերից, պէտք է կռւել այդ կարգերի դէմ, պէտք է տապալել այդ կարգերը. երբ խորտակւի ընդհանուր չարիքը, կրվեադառնան և մասնաւոր դէպքերը։

Ապա Կարլոսը հրաւիրում է հօրը միանալ Կուբայի ապստամբութեան ղեկավար Գոմիցի, Մասէօնի, Մարտինի և այլոց հետ ու կռւել հայրենիքի ազատութեան համար։

Կարճ ժամանակում Վալիենտները ծախում են իրենց գոյքը ու ստացւածքը, այրում շէնքերը և երեքով՝ հայր, աղջիկ ու տղայ, նւիրում իրենց Կուբայի ազատութեան սուրբ գործին։



VII

Մասէօն նկարագրած յաղթութիւնից յետոյ իր զօրքով անցաւ Պինար-դէյլ-Ռիօ գաւառը. ուր համեմատաբար նրա դրութիւնն աւելի ապահով պիտի լինէր. նա այդտեղ սպասում էր օգնական զօրքի, որ գալու էր գնդապետ Ռիվերի առաջնորդութեամբ:

Իսպանական կառավարութիւնը՝ տեսնելով իր զօրքի յաճախակի պարտութիւնները, ապրտամբներ յանդուգն արարքները, որոշեց ամեն միջոց գործ դնել և վերջ տալ ապստամբութեան: Խիստ հրամաններ ու կարգադրութիւններ արձակեց ամեն տեղ՝ որ ոչ միայն օգնութիւն չտալ ապստամբներին և յարաբերութեան մէջ չլինել նրանց հետ, այլև չխօսել և հալածել ու գնդակահարել նրանց, այդ կարգադրութիւններին չհրնազանդողին և զանց առնողին սպառնում էր մահուան պատիժ. ամենուրեք զինուորական դրութիւն յայտարարեց և ոչ ոք իրաւունք չունէր տանից դուրս գալ արևը մայր մտնելուց յետոյ:

Աւելի խիստ էին տեղային գաւառական իշխանութիւնների կարգադրութիւններն ու գործունէութիւնը: Դրանց տւած էր լիակատար իրաւունք՝ անել, ինչ բարւոք կը համարեն այդ ուղղութեամբ: Վերջիններից ամենամոլեռանդն ու կատաղին Մանւէլ Ագվիլարի-Վեգան էր:

Նա ևս իր ամբողջ գոյքը վաճառ էր հանել

և նւիրել ապստամբութիւնը ճնշելու գործին: Իսպանական հեծելազնիքից մէկի հրամանատար էր կարգւել նա և գործում էր չափազանց համարձակ ու անվախ. նա գնում էր ամենից առաջ, մտնում ամենավտանգաւոր տեղերը և միշտ էլ անվտանգ դուրս գալիս. նրա մասին հրաշապատումներ (լեգենդա) էին յօրինել: Եւ նա չգիտէր, որ այդ ամենով նա պարտական էր Կարլոսին:

Մանւէլ Ագվիլարի զայրոյթն ու կատաղութիւնը ծայր աստիճանի հասաւ, երբ նա առաջին անգամ թշնամուց բաւական զօրեղ հարւած ստացաւ: Նա ոչ միայն մարմնով ջարդւեց, այլև կորցրեց որոշ հեղինակութիւն. այն կարծիքը, թէ նա անխօցելի է, չքանում էր նրա շրջապատողների գլխից: Պէտք է ասել որ, այն ձիաւորը, որի ձին այնքան յաջող գնդակահարեց Մարիուսը, Մանւէլ Ագվիլարի-Վեգան էր:

Այդ էր պատճառը, որ նա յայտարարել էր, թէ ով ատում է Կարլոսին, Ֆրիկետտային, Դօլօրէսին և նրանց ծառայ Մարիուսին՝ և եթէ իբրև ապացոյց իրեն ցոյց տայ դրանց զուլխները, կը ստանայ հազարական ըուբլի: Իսկ ով սպանէ զլիաւոր խռովարար Անտօն Մասէօնին՝ իր միակ աղջիկ Կարմենին նրան կնութեան կը տայ:

Իսպանական կառավարութիւնը կենտրոնացրեց իր զօրքը Պենար-դէյլ-Ռիօ շրջանում և առաջ շարժեց դէպի ապստամբները՝ վերջնականապէս նրանց բնաջինջ անելու նպատակով:



Այդ ամենի մասին իր ժամանակին ճշգրիտ տեղեկութիւններ էր ստանում Մասէօն: Նա տեսնում էր, որ այս անգամ թշնամին շատ ու շատ ուժեղ էր և մեծ, ոչ միայն յարձակել, պաշտպանելն անգամ վտանգաւոր էր ու անմիտ: Պէտք էր յետ նահանջել, խուսափել ճակատամարտից: Բայց արդէն ուշ էր. նա սպասում էր օգնութեան, որը չհասաւ ժամանակին, թշնամին կանխել էր և շրջապատել երեք կողմից, իսկ միւս կողմում ծոփն էր:

Նա վճռեց պաշտպանողական դիրք բռնել ու կռւել մինչև վերջին մարդը Կուբայի ազատութեան համար:

Ապստամբները բռնել էին մի մեծ ագարակ, որի տէրը երևի հարուստ իսպանացի, փախել էր տանից: Ամրացրին այդ ագարակը և սպասում էին յարձակման:

Պինար-Դէյլ-Ռիօի շրջանը յայտնի էր մեղաբուծութեամբ, համարեա տմեն ագարակ ունէր իր մեղանոցը, և ամեն մի մեղանոց բաղկացած էր մի քանի հարիւր փեթակներէից: Մարիուսը լաւ ուսումնասիրել էր իրենց բռնած ագարակը. ման էր եկել և գիտէր նրա ամեն մի ծակ ու ծուկ:

Մինչ այդ իսպանական զօրքը արագ ընթացքով առաջ էր գալիս. ապստամբները կատարեալ գիտակ էին իրենց դրութեան վտանգաւոր լինելուն և ոչ ոք ազատւելու յուսով չէր ապրում: Սկսեց յարձակումը, որ կատարեց

իսպանական առաջապահ զուէրը: Առաջին յարձակումը յետ մղւեց:

Նոյն օրը կէսօրին, երբ դադար էր առել կռիւը Մարիուսը մօտեցաւ Մասէօին և նրա ականջին երկար փսփսած: Մասէօն թէև զարմացած էր, բայց իրաւունք տւեց նրան անել, ինչ ուզում էր:

Մարկուսը մի քանի տասնեակ զինւորի օգնութեամբ կէսօրին, երբ մեղուները տօթից վերադարձել էին փեթակ և հանգստանում էին, կաւով փակից մօտ 300 փիթակի անցքերը և տեղափոխւեց կռւի առաջին դիրքերը, փեթակները հագցրեց զինւորի շորեր և գլխարկներ:

Երեկոյեան պահին կռիւը վերսկսեց: Մասէօն երկու լեռնային զինամիտ-թնդանօթ զործում էին ուժեղ և հարւածում թշնամուն անխնայ: Այդ աւելի ևս զրգռեց թշնամուն:

Մանւէլ Ագվիլարը իրաւունք ստացաւ յարձակել միայն հեծելագնդով և խոստացաւ անպայման տիրել այդ երկու թնդանօթին:

Ապստամբները սկզբում զօրեղ զիմադրութիւն ցոյց տւին, ապա զիմեցին փախուստի: Իսպանական հեծելագունդը զրոհ տւեց և ընկաւ փեթակների մէջ՝ մթնշաղին չտարբերելով փեթակները մարդկանցից: Զարգւեցին բոլոր փեթակները սրերի հարւածներից և մեղուների յուզւած կարկուտը տեղաց հեծելագնդի վրայ: Մեղուների խայթումները և թնդանօթների հար-



ւածները միանգամայն վերջ տւին իսպանական այդ ընտիր հեծելազօրքին:

Ապստամբների հեծելազունները օգուտ քաղեց և ինքը յարձակեց թշնամու հետևակ զօրքի վրայ:

Իսպանական զօրքը կարծեց, թէ իր հեծելազունդն է վերադառնում, մօտ թողեց նրան, երբ իսկութիւնը յայտնի եղաւ՝ ապստամբների հեծելազօրքն արդէն սկսեց իր աւերածը, ձիերի տաքերի տակ տւեց և սրերով խողխողեց հետևակ գունդը, որն ստիպւած փախստի դիմեց անկարգ:

Այդ ճակատամարտից ապստամբների ձեռքն ընկաւ 500 կատարելագործւած հրացան, 60,000 փամփուշտ, երկու հարիւր ձի և մի թնդանօթ:

## VIII.

Իսպանական պատերազմական ուժը վերջին կուռում այնքան թուլացաւ կուբա կղզում, որ կառավարութիւնն անկարող էր կարճ ժամանակում նոր ուժեր բերել, կենդրոնացնել և նոյն թափով շարունակել պատերազմական գործողութիւնները, այնպէս որ ապստամբները կատաբեալ ազատ էին զգում իրենց. նրանց առաջ բացեց գործողութեան ընդարձակ դաշտ: Պինար-դէյլ-Ռիօ ամբողջ շրջանը նրանց տրամադրութեան տակ մնաց, նրանք սպառնում էին նոյն իսկ մայրաքաղաքին, Հաւանին:

Մասէօն կարգադրեց զինաթափ անել գե-

րի զինւորներին և ազատ արձակել, հիւանդներին խնամել ու առողջացնել, իսկ Կարլոսին գերի զինւորներով ուղարկեց գլխաւոր շտաբի համար յարմար ու ամուր ազարակ փնտրելու, որպէս բնակարան:

Կարլոսի խումբը կանգ առաւ մի տան առաջ. որի պատին ծածանւում էր իսպանական դրօշակ: Այդ նշան էր, որ տան տէրը ապստամբութեան հակառակ էր:

Կարլոսն այդ տան մէջ գտաւ իր համար բոլորովին անսպասելի կերպով Կարմենին. երկու տարի էր անցել այն օրից, երբ նրանք բաժանւել էին և մինչ այդ օրը իրար չէին տեսել: Ուրախութիւն և զարմանք իրար էին խառնել: Կարմէնը շնորհակալութիւն յայտնեց, որ իսպանական զօրքը խնայում է իր հօրը Կարլոսի շնորհիւ, այդ յայտնել էին նրան գերի զինւորները, որոնք ապստամբների կեանքից շատ ու շատ ազնիւ ու վեհանձն դէպքեր էին պատմում:

Կարլոսը խնդրեց Կարմենին, որ այդ բնակարանը յատկացնէ իրենց գլխաւոր շտաբին: Կարմենը խոստացաւ անել հարկաւոր կարգադրութիւնը և իր կողմից խնդրեց: որ իսպանադրօշակը մնայ այդ տան վրայ հասարակապետական դրօշակի հետ միասին: Նա բնազդաբար չէր համակրում ապստամբութեանը, բայց ճանաչում էր, որ ապստամբներն արդար էին ու ազնիւ:

Կարլոսը խօսք տւեց կատարել այդ խնդիրը, որի համար արժանացաւ Կարմենին ձեռքը համ-



բուրեւոն, այդտեղ նորից խօսք տւին ապրել միմեանց համար և հաւատարիմ մնալ մանկական բարեկամութեան և պատանեկական ջերմ սիրուն:

Կարլոսին ճանապարհ ձգեց տան ծառան, Կարմենի միակ պահապանը: Նա ականջ էր դնում նրանց խօսակցութեան և լսեց բոլորը: Նա Մանւէլ Ազվիլարի հաւատարիմ ծառան էր, ունէր նոյն գունաւոր նախապաշարմունքը և ատելով ատում էր ապստամբներին: Խէթ աչքով էր նայում Կարմենի վրայ և պատրաստ էր վրէժ լուծելու և նրանից, այդ սրբապղծութեան համար, այսինքն, որ նա սիրում էր Կարլոսին:

Այդ օրից Փրիկեստտան Դօլօրէսն ու Պաբլօն ապրում էին Մանւէլ Ազվիլարի բնակարանում: Կարմենը նորից հանդիպեց իր մանկութեան ընկերներին՝ Դօլօրէսին և Կարլոսին, որին իր նշանածն էր համարում: Նա ծանօթացաւ ու սիրեց նաև Փրիկեստտային:

Այդտեղ էր ապրում և բժիշկ Սերրանօն, նա հէնց առաջին օրից ընկճեց Կարմենի գեղեցկութիւնից և նրա սրտում բորբոքեց բուռն սէր, որ կուրացրեց նրա խիղճը, և նա դարձաւ ոչ միայն դաւաճան Կուբայի ազատութեան սուրբ գործին, որին նւիրւած էր իր ամբողջ էութեամբ ու գիտութեամբ, այլ և իր անձնական ընկեր ու բարեկամ Մասէօի սպանիչը:

Կարմենի խարդախ ծառան, Կրիստօբալը,

շատ շուտ նկատեց բժշկի հոգու կերպարանափոխութիւնը, և նրանք մօտեցան իրան, Կրիստօբալի օգնութեամբ բժիշկը ներկայացաւ Մանւէլ Ազվիլարին:

Մանւէլ Ազվիլարը վերջին կռոււմ մեղուներից սարսափելի խայթոցներ էր ստացել, ընկել էր ձիուց վայր և թւը կոտորել: Նրան գտել էին կիսամահ գրութեան մէջ իսպանական զինւորները և իր խնդրով տեղափոխել իր ազարակը: Որովհետև այդ ժամանակ նրա բնակարանը բռնել էր թշնամու շտաբը, Կրիստօբալը իր տիրոջը ամենքից գաղտնի տեղաւորել էր Սկիպիոն անունով խափշիկի տանը և այդ մասին Կարմենին ոչինչ չէր ասել, որը հօր մասին ոչ մի տեղեկութիւն չուներ և անհանգիստ դրութեան մէջ էր: Կրիստօբալը պատմել էր Ազվիլարին, թէ Կարմենը ապստամբների հետ յարաբերութեան մէջ է, թէ նրանց թողել է իրենց բնակարանը և ուրիշ հազար ու մի զրպարտութիւններ էր բարդել խեղճ աղջկայ գլխին:

Մանւէլ Ազվիլարը սարսափելի դրութեան մէջ էր, նրա մարմինը մեղունների խայթերից ուռել, այլաճակել էր, կոտրած թևի ցաւը, ուռուցքների կսկիծը թէ նրանց տանջում էին, անհրաժեշտ էր բժշկական օգնութիւն:

Կրիստօբալը պատմել էր նրան Սերրանօ բժշկի մասին և այն, թէ բժիշկը անշափ սիրում է Կարմենին, պատրաստ է ամեն ինչ կատարել, միայն թէ արժանանայ այդ չքնաղ գեղեցկու-



հուն: Այդ մասին ինքը Կրիստոբալը խօսել, պայ-  
մանաւորւել էր բժշկի հետ:

Մանէլ Ագվիլարի համար թէև դժւար էր  
հաւատալ թշնամուն, և այն էլ Սերրանոյ նման  
մի մարդու, որ իր թէ մասնագիտութեամբ և թէ  
ազատութեան գործի մէջ ցոյց տւած բոլոր ծա-  
ռայութիւններով մեծ հռչակ էր ստացել, այնու-  
ամենայնիւ նա համաձայնեց ընդունել բժշկին,  
օգտւել նրա ծառայութիւններից, քանի որ ու-  
րիշ ելք չկար, պէտք էր նախ առողջանալ և  
ազատւել մարմնական ցաւերից. երկրորդ՝ նրան  
այրում էր վրէժխնդրութեան ծարաւը: Մանէլ  
Ագվիլարի նման մի մարդը չէր կարող միջոցնե-  
րի մէջ խտրութիւն դնել:

Բժիշկ Սերրանոն Կրիստոբալի օգնութեամբ  
ամեն գիշեր ծածուկ այցելում էր Ագվիլարին  
և բժշկում նրան. խօսք էր տւել սպանել Մա-  
սէօին, միայն թէ արժանանայ Կարմենի ձեռ-  
քին: Նա իրեն շատ զգոյշ էր պահում: Կարմենը  
միայն տեսնում և զգում էր, որ բժիշկը առան-  
ձին ուշադրութիւն էր դարձնում դէպի ինքը,  
ջերմ վերաբերւում իրեն. բայց այդ ամենին նա  
նշանակութիւն չէր տալիս, որովհետև չէր կաս-  
կածում, որ իր նշանածի մտերիմ բարեկամը  
կարող է ընդունակ լինել ստոր արարքի:

Մանէլ Ագվիլարը օր աւուր իրեն լաւ էր  
զգում և համարեա առողջացել էր, օր աւուր  
զարգանում էր նրա մէջ վրէժխնդրութեան ծա-  
րաւը: Նա արդէն կազմել էր դժոխային մի ծրա-

գիր ոչնչացնելու իր թշնամիներին — Ֆրիկետ-  
տային, Դօլօրէսին, Մարիուսին, Կարլոսին ու  
Մասէօին:

Մինչ այդ ապստամբները տէր դառնալով  
Պինար-Դէյլ-Ռիօ շրջանին և զգալով իրենց կա-  
տարեալ ապահով, հանգիստ էին առնում մոռա-  
նալով անցեալ և ապագայ նեղութիւններն ու  
վտանգները: Ոչ ոք չգիտէր, թէ Ագվիլարն այդ-  
քան մօտ է ապրում իրենց և դաւեր է լարում:

Այն ինչ Ագվիլարը յարմար համարեց ըո-  
պէն և սկսեց իր ծրագիրը մաս-մաս գլուխ բե-  
րել: Նա կանչեց խափշիկ Սկիպիոնին, որի տանն  
ապրում էր ինքը, խոստացան նրան մեծ գումար,  
եթէ նա կարողանայ սպանել Ֆրիկետտային ու  
Դօլօրէսին: Սկիպիոնը պատկանում էր «Վօդու»  
կոչւած աստուածութեան պաշտողների խմբին:  
«Վօդու» պաշտամունքը մարդկային զոհեր էր պա-  
հանջում. ով այդպիսի զոհ բերէր, նա կը հա-  
մարէր ամենից բարեպաշտը: Ագվիլարը համո-  
զեց Սկիպիոնին փախցնել այդ կանանց և զոհել  
ջրի պաշտամունքին:

Ֆրիկետտան, Դօլօրէսն ու Պարլօն Մարի-  
ուսի ուղղեկցութեամբ համարեա ամեն օր դուրս  
էին գալիս զբօսանքի մօտակայ անտառ: Մա-  
րիուսը իրեն յատուկ ճարպիկութեամբ ու հնարք-  
ներով թռչուններ էր որսում և զւարճացնում  
ընկերներին:

Մի անգամ էլ, երբ նրանք մտել էին մա-  
ցառուտներից շինած պատւարի տակ և Մարիուսը



հազար ու մի ձայներ հանելով ու թռչունի նման երգելով՝ դէպի ինքն էր գրաւում թռչուններին, որ միանգամից մի քանիսին խփէ, պատւարը փուլ եկաւ նրանց գլխին: Մարիուսը գլուխը մացառուտների միջից մի կերպ դուրս հանեց և տեսաւ, որ չորս խափշիկ, հսկայ հասակով, յարձակւում են իրենց վրայ:

Մինչ նա աշխատում էր դուրս գալ և դիմադրել նրանց, նրանցից մէկը դաշոյնի ուժեղ հարւածով զարկեց նրա ձախ ուսին, և նա ուշաթափ վայր ընկաւ:

Խափշիկները կարծեցին, թէ նա մեռաւ, կապեցին կանանց ձեռք ու ոտքը, բերանները փակեցին թաշկինակներով և Պարլոին էլ հետներն առած փախցրին նրանց և տարան «Վօդու» պատւածութեան տաճարը, որ գտնւում էր անտառի խորքում հեռու մարգարնակ վայրից:

Տաճարի մէջ տեղում բարձրանում էր զոհարանը, որի վրայ ծածանւում էր կարմիր դրօշակ: Զոհարանի երկու կողմում կանգնած էին քուրմը և քրմուհին, իսկ նրանց շրջապատել էին խափշիկները: Տաճարում կատարում էին նրանց համար անհասկանալի ծիսակատարութիւն, որն աւելի շուտ ծիծաղ էր յարուցում, քան ազօթողի լուրջ տրամադրութիւն ստեղծում: Սակայն տեսարանը շուտով փոխւեց, և ըստ երևոյթին կատակերգութիւնը ողբերգութեան վերածւեց: Քուրմը ազօթողի դերից անցաւ դահճի դերին, նրա մօտ բերին մի երեխայ, նա ձախ ձեռքով

բռնեց երեխայի գլուխը, իսկ աջ ձեռքում պահած դանակով կտրեց նրա գլուխը. արիւնը յորդ հոսանքով թափւեց զոհարանը:

Փրիկետտան ու Դօլօրէսը ձեռքերն ու ոտքերը կապած նստած էին պատի տակ. նրանց մօտ կուչ էր եկել Պարլոն: Դօլօրէսը պատմել էր Փրիկետտային այդ պաշտամունքի էութիւնը. թէ ինչպէս իսպանական կառավարութիւնը հալածում էր այդ աղանգին հետևողներին, այնուամենայնիւ դեռ չէր յաջողել վերացնել այդ յանցաւոր պաշտամունքը:

Եթէ սկզբում Փրիկետտային այդ ամենը կատակ էր երևում և ծիծաղելի, վերջին տեսարանի հանդէպ նա յուզւել էր ու բորբոքւել: Նա մոռացել էր իր անձի վտանգը և լցւել արդար բարկութեամբ դէպի մարդկային մտքի տգիտութիւնը, նենգութիւնն ու խարդախութիւնը, որ կարողանում են մոլորեցնել միամիտներին անյայտ ուժերի սպառնալիքով և յանցաւոր դարձնում նրանց:

## IX

Կարլոսն ու Կարմենը ի դուր էին սպասում գրօնողների վերադարձին: Ստիպւած նրանք դիմեցին անտառ իմանալու, թէ ինչ է պատահել նրանց: Անցան բաւական տարածութիւն: Անտառի խտութեան մէջ նրանք նկատեցին խոտի տրորւածք. երևում էր, որ ընդհարում է տեղի



ունեցել, աւելի մօտեցան և մացառուտների մէջ գտան Մարիուսին ուշազնայ դրութեան մէջ՝ Ուշքի բերեն Մարիուսին, որի կցկտուր խօսքերից երևում էր, որ նրա ընկերներին խափշիկները փախցրել են:

Մարիուսի վերքը թէև մեծ էր ու լայն, բայց այնքան էլ վտանգաւոր չէր: Կարլոսը Մարիուսին զինւորների օգնութեամբ տուն տարաւ և մինչ կապում ու խնամում էր նրա վերքը, սուրհանդակն եկաւ և կանչեց նրան Մասէօի մօտ:

Կարլոսը գտաւ Մասէօին մտահոգ վիճակում:

Մասէօն յայտնեց, թէ նամակ է ստացել, որով յայտնում են, թէ ամերիկական «Պեննիլէս» նաւը ռազմական մթերք է բերում ապստամբներին, որին վտանգ է սպառնում իսպանական ցամաքային զօրքից ծովափում: Անհրաժեշտ է այդ ափը մաքրել իսպանական զօրքից, որ հնար լինի անմիաս ստանալ բերած մթերքը, որն այնքան անհրաժեշտ է իրենց:

Կարլոսը պատմեց այդ օրւայ դէպքի մասին և խնդրեց մտածել ու կարգադրել նաև այդ մասին:

Մասէօն յայտնեց, որ անհրաժեշտ է դատարկել ագարակը և ամբողջ ուժով գնալ նաւին օգնութեան, որովհետև թշնամին այդտեղ շատ ուժեղ է: Այդ դէպքի յաջողութիւնից է կախւած ազատութեան կռիւ յաղթանակը, քանի որ

նաւը բերում է իր հետ նոր կատարելագործւած հրազէններ:

Այնուամենայնիւ Մասէօն ի նկատի ունենալով Ծրիկետտայի, Դօլօրէսի ու Մարիուսի այնքան մեծ ծառայութիւնները ազատութեան գործին՝ յանձնեց Կարլոսին յիսուն զինւոր և կարգադրեց արագ փնտռել, գտնել կորածներին և պատժել յանցագործներին, ինչպէս արժան է: Կարլոսն իրեն օգնական վերցրեց Ռոբերտ Էնթթասային, որ յայտնի էր իր ճարպիկութեամբ, անվեհերութեամբ ու ազնւութեամբ:

Չանցաւ մի ժամ, դատարկեց ագարակը: Մասէօն զօրքի գլուխն անցած՝ դիմեց դէպի ծովափ, իսկ Կարլոսն սկսեց փնտռել յափշտակւածներին:

Ագարակում մնացին Կարմենն ու Մարիուսը: Օրը սաստիկ տաք էր, հասարակածի տօթօրերից մէկը: Կարմենը շոգից նեղւած՝ պառկել էր ճօճանակի վրայ և օրօրւում էր խոր մտածմունքի մէջ:

Այդ ժամանակ դուռը բացեց և ներս մտաւ Մանուէլ Ազվիլարը յիմար ու այլանդակւած դէմքով: Այն վայելչակազմ ու պարթև տղամարդուց միայն կմախքն էր մնացել:

Կարմենը առաջին հայեացքից չճանաչեց, նա կէս վախի ու կէս շփոթութեան մէջ տեղից վեր թռաւ և երբ ճանանչեց հօրը, «մի, հայրիկ» բացականչելով վազեց դէպի նա: Ազվիլարը սառը պատասխանեց աղջկայ ուրախ դիմա-



ւորելուն և նստելով աթոռի վրայ՝ սկսեց յանգիմանութեան ու սպառնալիքի տարափ տեղալ անմեղ աղջկայ գլխին, թէ նա ապստամբներէ հետ է միացած, նրանց օգնութիւն է տալիս, թէ նա արատաւորում է և՛ իր, և՛ իր ընտանիքի պատիւը, քանի որ ուզում է ամուսնանալ աւագակ, ստրուկի զաւակ Կարլոսի հետ:

Կարմենը մէջ ընդ մէջ առարկում էր հօրը թէ նա անհուն սիրում է հօրը, համակիր չէ երբէք ապստամբութեան, սակայն սիրում է Կարլոսին, և ինչ էլ որ ասեն իր ժառանգական բնազդներն ու հասարակական կարծիքը, նա այնուամենայնիւ բացի Կարլոսից ուրիշ ոչ ոքի չի կարող ճանաչել աշխարհիս վրայ:

Կարմենի վերջին խօսքերը կատաղեցրին հօրը, և նա բարկութիւնից գոռաց աղջկայ վրայ, բարձրացաւ տեղից և վերցնելով աթոռը՝ ուզում էր խփել նրան. այդ պահին դուռը կրկին բացւեց և ներս մտաւ Մարիուսը. նրան հետեց և «Բրավօ» շունը:

Մաքեաւսը պառկած էր եղել հարեան սենեակում, լսել էր նրանց աղմուկը և եկել էր իմանալու, թէ ինչ է պատահել Կարմենին:

Ագգիլարը հէնց որ տեսաւ Մարիուսին, աթոռը բնազդաբար վայր դրեց և ձայն տւեց իր մարդկանց: Իսկոյն ներս թափւեցին մի քանի խափշիկներ Արիստոբալի առաջնորդութեամբ: Բարձր հասակով, ուժեղ ու մկանոտ հսկայ մար-

դիկ: Ագգիլարի նշանով նրանք յարձակեցին Մարիուսի վրայ:

Սկսեց անհաւասար, բայց կրքոտ ու կատաղի մի կռիւ Մարիուսի և նրանց միջև: Մարիուսը աթոռի մի հարւածով գետին գլորեց վիթխարի Արիստոբալին, սակայն ինքն էլ իր հարւածի թափից, առանց այն էլ հիւժւած ու տկար, քիչ մնաց վայր ընկնէր, բայց նա յենւեց պատին: Բրավօն, որ վարժւած էր խափշիկներ գգելով, վրայ պրծաւ և երկուսին խիստ վիրաւորեց. սակայն ինքն էլ սրի զօրեղ հարւած ըստացաւ ու սուր վնաս: Կարմենը կամենալով պաշտպանել Մարիուսին, իր մարմնով առաջ նետւեց, բայց սոթ տւեց յատակի արիւնից և ցած ընկաւ:

Այդ կրիտիքական ընդհանր դուռը երրորդ անգամ բացւեց և Ռոբերտ ենթանալան ատրճանակի երկու հարւածով վերջ տւեց խափշիկներին երկուսին: Միւս խափշիկները փախուստ տւին սենեակի մի այլ դռնով. Ռոբերտի յետեւից ներս եկան նրա զինւորները, բայց արդէն ուշ էր:

Ռոբերտը ձեռք չտւեց Ագգիլարին, այլ ընդհակառակը, ձեռքը դնելով ճակատին զինւորական պատիւ տւեց նրան և յայտնեց, որ նա ազատ է:

Ագգիլարը չընդունեց նրա ոչ պատիւը և ոչ էլ ազատութիւնը. նրան և նրա ընկերներին աւագակներ անւանեց, յայտնեց, թէ սիրով կու-



զենար նրանց ձեռքից մահ ստանալ, քան աղա-  
տութիւն, որը նրա համար պատիւ չէ, այլ ան-  
պատուութիւն, և հայհոյանքներով սպառնաց, թէ  
մինչև վերջին շունչը կաշխատի վրէժ լուծել  
ստոր ստրուկներէից:

Մինչ այդ՝ Ռոբերտը մօտեցաւ Կարմենին,  
բարձրացրեց տեղից և զինւորների օգնութեամբ  
նրան ու Մարիուսին դուրս տարան: Պատմեց,  
որ իրենց փնտռումները՝ գտնելու առեանգւած-  
ներին մինչև այդ ժամանակ իգուր են անցել:  
Նա վերադարձել էր, որ Բրավօին տանի, գու-  
ցէ շունը կարողանայ նրանց հետքերը գտ-  
նել, և բոլորովին պատահական կերպով նրանց  
օգնութեան եկաւ:

Քիչ հանգստանալուց և շունչ բաշխուց յե-  
տոյ, որոշեցին միասին գնալ փնտռելու և ոչ ո-  
քի մենակ չթողնել, քանի որ մահը ուրեականի  
նման թափառում էր ագարակում: Դժբախտա-  
բար շունը խիստ վիրաւորւած էր մէջքից և  
ցաւի կսկծից խղճալի վնասուում էր:

Նրանք անցան անտառը, հասան ափտեղ,  
ուր կատարել էր առեանգութիւնը: Այգտեղից  
սկսած Բրավօն առաջ անցաւ և հոտոտելով ու  
գալարապտոյտ վազ տալով դիմեց անտառի  
խորքը:

Շունը մէկ հոտոտում էր, հատ-հատ հա-  
ջում ու վազ տալիս, մէկ կանգնում, նայում,  
ապա հոտոտում, հաջում ու առաջ գնում. այդ  
կերպ նրանք բաւական մեծ տարածութիւն ան-

ցան. վերջապէս Բրավօն հաջոցն արագացրեց,  
ձայնը բարձրացրեց և ցատկեց առաջ: Նոցա ա-  
ռաջ բացեց մի շէնք:

Տեղացի զինւորներից մէկը յայտնեց, թէ  
այդ «Լօդու» պաշտամունքի տաճարն է: Տաճա-  
րի միջից լսում էին կանացի աղելարը ձայ-  
ներ, որ օգնութեան էին կանչում: Զինւորնե-  
րից երկուսը կացնի հարևածով դուռը ձեղքեցին  
և դէն ձգեցին: Տաճարը լի էր մեծ բազմու-  
թեամբ. քուրմը կանգնած զոհարանի մօտ՝ աջ  
ձեռքում բռնել էր դանակը և սպասում էր. տա-  
ճարի սպասաւորներից մէկը կապում էր Պաբ-  
լօին այն պարանով, որ կախած էր առաստա-  
ղից ուղիղ զոհարանի վրայ: Պաբլօն աղաղակում  
էր և լացակոծ օգնութեան կանչում: Ֆրիկետ-  
տան ու Դօլօրէսը կապկպած անդամներով դէս  
ու դէն էին տալիս իրենց, աշխատում էին քան-  
դել կապերը, վազել և խլել մարդակերների ձեռ-  
քից անբախտ երեխային: Նրանց կոծից, անէծ-  
քից ու աղաղակներից դղրդում էր շէնքը:

Ռոբերտը, մօտ թռաւ, սրով կտրեց պարա-  
նը և ձախ ձեռքով բռնեց Պաբլօին ու յետ բե-  
րեց պատի տակ. բանդեց և միւսների կապանք-  
ները:

Քուրմը որ սկզբում յանկարծակի էր եկել  
և չգիտէր, թէ ինչ է պատահել, տեսնելով,  
որ զինւորները շատ քիչ են, ընդամենը տասը  
հոգի, կոչ արեց բազմութեանը՝ յարձակել  
թշնամու վրայ և խլել նրանց ձեռքից զօր:



Ռոբերտը չկորցրեց իրեն և սառն ու անհրաժեշտ հրաման արձակեց զինւորներին համազարկերով յետ տալ ամբոխի գրոհը։ Համազարկերը կատարեցին իրենց գործը. սպանւեցին քուրմը, քրմուհին և մի քանի տասնեակ խափշիկներ։ Ամբոխը սարսափի եկած՝ փախստի դիմեց։

Անցաւ վտանգը. ամենքը ազատ էին. Ռոբերտը պահապաններ նշանակեց տաճարի չորս կողմը. երկու զինւոր էլ ուղարկեց դիտելու շրջակայքը, տեղեկանալու թշնամու շարժումների մասին։

Մինչ միւսները տաճարի մէջ նստած ընթրիք էին անում, շնորհակալութիւն յայտնում, շնորհաւորում միմեանց՝ ամենքի յաջող ազատւելը, խօսում ու պատմում էին դէպքերի այդ քմահաճ խաղը, դիտող զինւորները վերադարձան և լուր տւին, թէ թշնամին շրջապատում է տաճարը։

Ռոբերտը որոշեց տաճարում մնալ և այդտեղ պաշտպանւել. կանայք հիւժւել ու յոգնել էին կրած մարմնական ու հոգեկան այդ ապրումներից, առաջ գնալ չէին կարող։

# X

Ամերիկան, որ այնքան մեծ դեր էր կատարում Կուբայի ապստամբութեան գործում, իր օգնութիւնն ուղարկում էր ապստամբներին

նաւերով։ Սակայն այդ ամենը այնքան էլ հեշտ չէր կատարւում։ Իսպանական պատերազմական նաւերը շրջապատել էին Կուբա կղզին համարեա ամեն կողմից. երթևեկութիւնը դադարել էր մայր ցամաքից։ Ամեն մի նաւ, որ գալիս էր Կուբայ, ճանապարհին ենթարկւում էր Իսպանական նաւերի կողմից մանրազննին խուզարկութեան։ Բաւական էր մի կասկածելի իր գտնել նաւում, որ ուղղակի կամ անուղղակի առնչութիւն ունենար պատերազմի կամ ապրտամբութեան հետ. նաւը գրաււում էր Իսպանական իշխանութեան կողմից, իսկ նաւի մարդկանց անմիջապէս կախաղան էին բարձրացնում։

Արգելքի խիստ միջոցները, ինչպէս նկատւում է ամեն մի երևոյթի մէջ, ստեղծում են համաչափ զգոյշ հնարքներ։ Իսպանական կառավարութեան ձեռք առած միջոցները թէև դժւարացնում էին Ամերիկայի օգնութեան գործը, բայց դրան վերջ չէին կարող տալ։ Կէյ-Վեստ կոչւած կղզու բնակիչները յայտնի էին որպէս անվախ ճարպիկ ու հմուտ նաւաստիներ։ Նրանք զիտէին ծովի համարեա ամեն մի ալիք, ծովափերի ամեն մի քար ու թուփ։ Նաւում էին խիստ արագ նաև մթութեան մէջ։ Այնպէս որ լոյս ու խաւար նրանց նաւարկութեան համար հաւասարազօր միջավայր էին ներկայացնում։

Նրանց տւել էին «Յորտակող» անունը, որ երբէք չէր բղիտում նրանց գործնէութիւնից. նրանք ոչ թէ խորտակում, այլ ազատում ու



փրկում էին ալեկոծութեան կամ այլ պատահարի հանդիպած ճանապարհորդներին: Խորտակողները առաջնորդութեամբ ու ղեկավարութեամբ էին ամերիկական նաւերը ռազմամթերք, զօրք ու այլ օգնութիւն հասցնում ապստամբներին: Ապստամբութեան երկար ու ձիգ տարիների ընթացքում դեռ չէր պատահել, որ ամերիկական մի այնպիսի նաւ, որի նաւապետը լինէր «Խորտակողներից մէկը, և ընկնէր թշնամու ձեռքը:

Ահա այդ «Խորտակողներից մէկի հմուտ ձեռքն էր, որ վարում էր «Պեննիլէս» նաւի դեկը և մթութեան մէջ այնպէս արագ սըլանում:

Պեննիլէս նաւը պարունակում էր ամերիկացի յայտնի միլիտնատէր Ժորժ Դէ-Սօլինեսկին, որի մականունն էր Անփողեան, վեհ հոգու բիւրեղ սրտի տէր մի անձն: Այդ մարդը շատ բարի էր, օգնում էր առանց խտրութեան, ամենքին. թոյլերի ու հալածանքների անընկճելի պաշտպանն էր: Նրա մարդասէր հոգին զատուում էր և սաւառնում գեղեցիկ իդէանների աշխարհում:

Այժմ նա գնում էր Կուբայի ապստամբներին օգնութեան, տանում էր իր հետ մի խոշոր գումար, մեծ քանակութեամբ ռազմամթերք, առաւելապէս վերջին տեսակի հրազէններ և մի օդապարիկ, որով կարելի էր ոչ միայն սաւառնել ու դիտել թշնամուն, այլ և կռւել—բարձ-

բանալ վեր և այնտեղից կրակ տեղալ թշնամու դիրքին:

Անփողեանի հետ էր և նրա կինը, տիկին Կլաւդեան, նրա անբաժան ընկերակիցը բոլոր մարդաշահ ձեռնարկութիւնների մէջ:

Պեննիլէս նաւը մօտենում էր կղզուն. մինչև այդտեղ նա եկել էր ուղիղ ընթացքով: առանց շեղելու իր բռնած ճանապարհը: Այլևս նոյն ուղիով առաջ գնալ չէր կարելի. անհրաժեշտ էր թեքել, անցնել ժայռերի յետևը, նրանց արանքով գալարապտոյտ ուղղութեամբ առաջ գնալ: Հակառակ դէպքում թշնամու ձեռքը պէտք է ընկնէին:

Մինչ նաւավարը խորհուրդ էր տալիս Անփողեանին թեքել ուղղութիւնը, իսկ Անփողեանը անհոգ ժպտով յայտնում էր, թէ աւելի լաւ է ուղիղ գնալ, չխուսափել թշնամուց, լսեց իսպանական ռազմական նաւի ազդանշանը:

Թշնամին նկատել էր Պեննիլէսին և կրակ բացեց. այդ նշանակում էր, որ պէտք է կանգնել և ենթարկւել խուզարկութեան. հակառակ դէպքում ումբակոծութեան էր ենթարկւելու:

Բոլոր ծառայողների մարմնով մի սարսուռ անցաւ. անխուսափելի էր մահը: Սակայն Անփողեանը ամենայն հանգստութեամբ հրամայեց. նաւը կանգնեցնել չտեսնելով դրանում ոչ մի անսովոր երևոյթ:

Իսպանական զրահանաւը բաւական մօտ եկաւ ու կանգ առաւ. նրա միջից նաւակ նստեց



մի սպայ երկու գինւորի ուղեկցութեամբ և դիմեց դէպի Պեննիլէսը: Անփողեանը վերին աստիճանի քաղաքավարութեամբ ընդունեց սպային, յայտնեց իր ով լինելը և ծանօթացրեց կնոջ հետ և հրաւիրեց իր առանձնասենեակը:

Սենեակները շքեղ կահաւորութիւնը և Անփողեանի ընտանիքի դիրքն ու վարեցողութիւնը միանգամայն զինաթափ արին սպային:

Դժւար էր կասկածել, թէ այդպիսի պատրաստութեամբ ու հարստութեամբ՝ մէկը, այն էլ իր ընտանիքի հետ միասին, կարող էր վտանգաւոր ձեռնարկութեան դուրս գալ, պատերազմական արգելած պաշարեղէն տանել, այն էլ այնպիսի մի ճանապարհով, որ ամբողջովին բռնւած էր իսպանական զրահանակերի ցանցով:

Սպան համապատասխան քաղաքավարութեամբ յայտնեց, թէ ինչնպատակով է նրան այցի եկել և խնդրեց թոյլ տալ իր գինւորական պարտքը կատարել, այսինքն նաւը խուզարկել:

Անփողեանը առանձին ուրախութիւն յայտնեց, որ հանդիպել է այդ սպային, որի կրիտիքական դրութեանը նա տեղեակ է, և այժմ առիթ ունի օգնելու նրան, նա գիտէ, որ սպան թղթախաղի մէջ տարւել է մի մեծ գումար. այդ գումարը նա վճարել չի կարող. մնում է նրան կամ չվճարել և թողնել ծառայութիւնը, որ մեծ անպատուութիւն է, կամ գնդակի մի հարւածով վերջ տալ իր կեանքին:

Անփողեանը, որ սիրով օգնութեան է գնում

ամեն մի նեղեալի, չի կարող անտարբեր մնալ սպայի այդ վիճակին:

Այդ ամենը արտասանեց մի այնպիսի տոնով ու եղանակով, որ սպան չնկատեց էլ, թէ Անփողեանն ինչպէս խուսափեց նրա առաջարկութիւնից. նա յանձին Անփողեանի՝ գտաւ հազաւազիւս բարերարի և եզակի մարդասէր անձի: Սպան ընդունեց Անփողեանից մի խոշոր գումար. այդ գումարը բաւական էր նրան և պարտքը վճարելու և պատուով ապրելու:

Սպան՝ յուզւած առատ բարերարութիւնից՝ խնդրեց Անփողեանին՝ ասել, թէ ինչով կարող էր նրան մի չնչին ծառայութիւն անել:

Անփողեանը ասաց, թէ ինքը գնում է լոկ ճանապարհորդութեան և անցնելու է Կուբա կղզին: Դժբախտաբար այնտեղ ապստամբութիւն է բռնկւել, վտանգը մեծ է. նրան ճանապարհին ամեն մի քայլում կանգնեցնում են և ի դուր անհանգստութիւն պատճառում. աւելորդ չէր լինի, եթէ սպան բարի գտնւէր և տար մի թուղթ թէ Պեննիլէսը ապստամբութեան հետ ոչ մի առնչութիւն չունի, չի պարունակում իր մէջ ոչ մի կասկածելի կամ արգելւած իր: Սպան չզանդաղեց տալ հարկաւոր գրութիւնը:

Երբ սպան կրկին նստեց նաւակ, Պեննիլէսը սուլեց ու առաջ անցաւ: Նա այժմ գնում էր աւելի ապահով, աւելի համարձակ: Մի քանի կէտում կանգնեցրին նրան իսպանական նաւերը, սակայն սպայի գրութիւնը կատարում էր իր



փրկարար դերը և անկասկածելի դարձնում Պեն-  
սիլէսին նրանց աչքում:

Դեռ չէր հասել Պենսիլէսը Կուբայի ափե-  
րին, երբ լսեցին հրազէնների անընդհատ պայ-  
թիւներ. նշանակում է ցամաքի վրայ, ափին  
մօտ կռիւ է տեղի ունենում:

Բաւական ժամանակ շարունակեց կռիւը,  
ապա հրացանի ձայներն սկսեցին հատ-հատ  
լսել և թուլանալ: Վերջապէս դադարեց հրացա-  
նաձգութիւնը:

Պենսիլէսը զգուշութեամբ մօտեցաւ ափին,  
սև ստերներ էին երևում այնտեղ: Նաւավարը  
ձայն տուեց, թէ ով է ափին.

«Կեցցէ ազատ Կուբան», լսեց ազդանշա-  
նը, որպէս պատասխան:

Դա Մասէօն էր, որ մաքրել էր ափը իս-  
պանական զօրքից և սպասում էր Պենսիլէսին:

Կարճ ժամանակում Պենսիլէսի բերած խո-  
շոր հարստութիւնն ու մեծ պաշարն անցաւ ցա-  
մաք և տեղաւորեց ուր հարկն էր:

Անփոդեանը յայտնեց, որ բացի ռազմամը-  
թերքից նա բերել է նաև օդապարիկ. այժմ օ-  
դապարիկով նա ուզում է մի փոքրիկ ճանա-  
պարհորդութիւն կատարել, գնալ ու տեսնել իր  
ազարակը, որ գտնւում էր Կուբա կղզու վրայ:  
Դրանով նա հնարաւորութիւն կունենայ փորձել  
նաև օդապարիկի ոյժն ու յարմարութիւնը. ա-  
պա կըյանձնէ Մասէօին պատերազմական նպա-  
տակի համար:

Նոր էր Մասէօն բաժանել ապստամբու-  
թեան մեծ բարերարից, երբ նկատեց, որ բը-  
ժիշկ Սերրանօն զօրքի մէջ չէր: Նրան յայտ-  
նեցին, թէ բժիշկը մենակ ուղղւորեց դէպի առաջ  
և խնդրեց իմաց տալ, թէ շուտով կըվերադառ-  
նայ:

Կասկած ընկաւ Մասէօի սիրտը. ինչո՞ւ և  
հըր գնաց նա, ինքն իրեն հարց տուեց Մասէօն.  
կասկածին հետեւեց մի զգացմունք, որ վախի  
ստեր էր կրում. նրան թւաց, թէ նա մեռնե-  
լու է. և դառն ափսոսանքի խոր յոյզը, թէ իր  
պաշտած ու գուրգուրած գործը, որին նւիրա-  
բերել էր ամեն ինչ, կարող է վտանգւել՝ պա-  
շարեց նրա էութիւնը:

Այդ կասկածին զուգահեռ զարթնեցին նրա  
գլխում մի շարք յիշողութիւններ Սերրանօի  
կեանքից, նրա անձնէր գործունէութիւնից, անձ-  
նական բարեկամական ջերմ յարաբերութիւնից  
և խեղդեցին այդ կասկածը: Սակայն մահւան  
նախազգուշացումը որպէս մշուշ պատել էր նրա  
հոգին և չէր քաշում այնտեղից:

Նա զօրքի առաջից գնում էր տխուր, խո-  
րասուզւած իր մէջ, երբ յայտնեցին, թէ Սեր-  
րանօն գալիս է:

Սերրանօն մօտեցաւ նրան և տարօրինակ  
փութկոտութեամբ ու յուզումով յայտնեց, թէ  
գնացել էր թշնամու շարժումները դիտելու. նա  
գտել էր՝ որպէս թէ թշնամին դիտմամբ է տե-  
ղի տւել ու յետ քաշւել, որ լաւ դիրքեր գրա-



ւի և մեծ ոյժով յարձակւի իրենց կոտորելու և ռազմամթերքը խլելու: Այժմ թշնամին գտնուում է այդ ճանապարհի վրայ և իրենց կորուստն անխուսափելի է, եթէ ճանապարհը չըփոխեն:

Մասէօն շնորհակալութիւն արեց բժշկին՝ հաւատալով նրա անկեղծութեան: Թշնամու հետ ճակատ տալն աւելորդ էր, քանի որ իր մարտիկների թիւը վեց հարիւրից աւելի չէր, նամանականդ տանում էր իր հետ այդքան մեծ պաշար: Անհրաժեշտ էր խուսափել ընդհարումներից. և նա որոշեց այլ ճանապարհով առաջ գնալ և շուտով միանալ իր զօրքի գլխաւոր մասի հետ:

# XI

«Վօդու» պաշտամունքի տաճարը թնդում էր համազարկերի ձայներից: Իսպանական երեք հարիւր զինուոր շրջապատել էր տաճարը, որտեղ իր տասը զինուորներով դիրք էր բռնել և պաշտպանւում էր Ռոբերտը: Միւսները՝ Փրիկետտան, Դօլօրէսը, Կարմենը, Մարիուսը գէնք չունէին և, որպէսզի չխանգարէին զինուորների շարժումները, անցել էին զոհարանի յետևը ու հետևում էին կռւի ընթացքին. նրանց մօտ էր և Պաբլօն:

Իսպանական զօրքի առաջին յարձակումը յետ մղեց. այդ աւելի ևս կատաղեցրեց թշնամուն: Նա վերսկսեց յարձակումը լուսաբացին, երբ արևն արդէն դիպել էր տաճարին:

Ռոբերտն ու իր զինուորները կռոււմ էին ծայր աստիճան լարած. գնդակները վերջանալու վրայ էին. թշնամին ահագին կորուստ էր տւել, բայց յետ դառնալ չէր կամենում, որովհետև գիտէր, որ հակառակորդի թիւը շատ քիչ էր, պաշարը սահմանափակ:

Ռոբերտը փորձ արեց անձնատուր լինել միայն այն պայմանով, որ թշնամին ազնիւ խօսք տայ խնայել կանանց և եղբխային: Եւ երբ նա սպիտակ թաշկինակը սրի ծայրին ամրացրած լուսամուտից դուրս պարզեց ու առաջարկեց այդպայմանը, լուեց կատաղի և մոլեգնտ մի ձայն. «Կոտորեցէք այդ ստրուկ և անպատկառ աւազակներին. չխնայել ոչ ոքի»:

Կարմենը կարմրեց ամօթից. դա Մանէլ Ագվիլարն էր, որ ղեկավարում էր յարձակումը և ուզում էր կոտորել անգէն կանանց:

Յարձակումը արագ նորոգւեց. թշնամին խլել էր դռան մօտի դիրքերը: Ընկաւ Ռոբերտի զինուորներից առաջինը. Դօլօրէսը թողեց իր տեղը և բռնեց սպանածի դիրքը նրա հրացանի հետ միասին: Դօլօրէսը կրակում էր որպէս հրմուտ նշան խփող:

Ընկաւ երկրորդ զինուորը. նրա տեղը բռնեց Կարմենը: Անազնիւ թշնամու յոխորտանքն ու ստոր վարմունքը Ռոբերտի և նրա ընկերների անձնւիրութիւնն ու վեհ վարմունքը կերպարանափոխել էին Կարմենին: Նա, որ ծնւած էր ու սնւած արհամարանքով ու ատալութեամբ



դէպի «սևերը», նա, որ չէր կարողանում հասկանալ և արդարացնել ապստամբութիւնը, որ այդ «սևերի» իրաւունքների համար էր բռնկւել, նոյն ապստամբութեան զինւոր դարձաւ այն վայրկեանին, երբ ամբարտաւան ու սև հոգին սպառնում էր խեղդել վեհն ու նւիրականը:

Եւ այդպէս ընկած զինւորների տեղերը իրար յետևից գրաւեցին կտնայք և նոյնիսկ արիւնհոտութիւնից հիւժւած Մարիուսը:

Սպանւեցին Ռոբերտի բոլոր զինւորները. Ռոբերտը միւսների հետ շրջան կազմած դիրք բռնեց զոհարանի մօտ. թշնամին ներս խուժեց՝ ձայն տալով — «Այժմ անձնատուր կը լինէք»:

Շրջանից առաջ նետւեց Դօլօրէսն ու կրակեց ասելով.

— «Երբէք, ամօթ նրան, ով անձնատուր լինի հայրենիքի թշնամուն: Կեցցէ ազատ Կուբան»:

Դօլօրէսին որպէս պատասխան տեղաց թըշնամու համազարկը: Տաճարը լցւեց ծխով: Միաժամանակ իրար յետևից լսեցին լըսից ռումբների պայթիւններ: Գետինը փուլ էր գալիս ռումբների հարուածներից և տակովն անում մարդկանց. ծուխն ու փոշին պատել էին տաճարը և նրա շրջակայքը: Ոչ ոք չգիտէր, թէ ինչ է կատարւում: Կոտորւեց իսպանական զօրքի մեծ մասը, կենդանի մնացածները ցրւեցին դէս ու դէն:

Հեռւից միայն նկատողներ եղան, որ ռում-

բերը ձգում էին օդապարիկից: Դա Անփողեանն էր. նա այդ տեղով անցնելիս իր օդային ճանապարհորդութեան ժամանակ պատահաբար նկատել էր իսպանական զօրքը և գլխի ընկնել, որ այդ շէնքի մէջ կարող է ապստամբներ լինել, պաշարւած թշնամով:

Երբ փոշին նստեց և ծուխը հեռացաւ, օդապարիկը ցած իջաւ ուղիղ տաճարի դռան առաջ: Անփողեանը դուրս եկաւ օդապարիկի միջից, մտաւ տաճարը և ձայն տւեց «Կեցցէ ազատ Կուբան»:

Ռոբերտն առաջ անցաւ և նոյն ազդանշանով յայտնեց իր ով լինելը, ապա միւսներին ներկայացրեց Անփողեանին:

Անփողեանը շատ ափսոսաց, որ քիչ ուշացել էր իր օգնութեամբ. նրան առանձնապէս մեծ ցաւ պատճառեց Դօլօրէսի մահը: Այն պահին, երբ թշնամին ներս խուժեց և համզարկ տւեց, Դօլօրէսը՝ շնորհիւ իր անվեհեր լինելուն՝ անզգոյշ գտնւեց և չպահեց իրեն դիրքում ու զոհ գնաց այդ կռուում:

Նա խորն ու դառն կսկիծ պատճառեց ամենքի սրտին. Ծրիկեստտան ու Կարմենը երկար ժամանակ չէին հաշտւում այն մտքի հետ, թէ բաժանւելու են ընկերուհուց, թէ այլևս Դօլօրէսը չի լինելու նրանց հետ:

Սակայն Անփողեանը յայտնեց, որ վտանգաւոր է դանդաղել, թշնամին կարող է ուշքի գալ և նրանց կրկին այդտեղ շրջապատել:



Դօլօրէսին տւին վերջին յարգանքն ու հրա-  
ժեշտը, նրա մարմինը ամփոփեցին փոսերից մէ-  
կում, ապա նստեցին օդապարիկ և վեր բարձրացան։  
Իսպանական զօրքը կարողացել էր նորից հաւաք-  
ւել, տեսնելով գործի էութիւնը՝ սկսեց ցածից  
գնդակահարել օդապարիկը, որի գունդը ծակեց  
մի քանի տեղից գնդակների հարւածներից բայց  
օդապարիկն անփնաս մնաց, և անցաւ եթերի  
վերին շերտերը անմատչելի երկրային ամեն մի  
շարժման։

Վտանգն անցաւ և օդապարիկը գնում էր  
յաջող ընթացքով. սակայն քիչ ժամանակից յե-  
տոյ սկսեց ցած իջնել, որովհետեւ գաղը գնդի  
ծակերից դուրս էր գալիս մեծ քանակութեամբ։  
Անփողեանն ու նրա պարկավարը չէին կարողա-  
նում հնարաւոր քանակութեամբ գազ հասցնել  
գունդը։

Իսպանական զօրքը նկատեց այդ և սկսեց  
հետեւել նրան ու ուժեղանալ։ Անփողեանն ստիպ-  
ւած եղաւ պաշարի մի մասը ցած թափել. այդ  
կերպ օդապարիկը բաւական թեթեւացաւ և նո-  
րից վեր բարձրացաւ։

Սակայն այժմ քամու ընթացքը փոխւեց և  
օդապարիկն ուղղւեց դէպի թշնամու կողմը։

Ռմբակոծումը ցածից շարունակւեց մինչև  
օդապարիկն անցաւ ծովի վրայ։ Այդտեղ իսպա-  
նական ցամաքային զօրքի փոխարէն զրահանա-  
ւերն սկսեցին հալածել օդապարիկը, որը նորից  
սկսեց ցած իջնել։

Վտանգը կրկնապատկւեց. երկու վտանգա-  
ւոր դրութիւն էր սպասուում օդապարիկին, կամ  
գերի ընկնել կամ խեղդւել ծովում։

Անփողեանը ջուրը ձգեց պաշարի մնացորդ-  
ները. մնացին այնտեղ միայն մարդիկ։ Օդապա-  
րիկը թէև վեր չբարձրացաւ, թեթեւացած բեռից  
բայց առաջ էր գնում հորիզոնական ուղղու-  
թեամբ։

Զրահանաւերը չդադարեցին հետեւել օդապա-  
րիկին. թնդանօթի գնդակները հասնում էին նը-  
րան, և վերջապէս լուրջ վտանգի մէջ գնում։  
Օդապարիկն սկսեց համարեա թեք ուղղութեամբ  
ցած իջնել։ Զրահաններն արագ ընթացքով դի-  
մեցին դէպի նա։

Առանձնապէս շեշտակի ընթացքով ու տա-  
րօրինակ արագութեամբ մօտենում էր մի նաւ,  
որ իսպանական դրօշակ էր կրում։ Անփողեանն  
իր հայեացքն ուղղեց դէպի այդ նաւը և սուր  
դիտելուց յետոյ բարձր ծիծաղեց։ Տարօրինակ  
էր այդ վտանգաւոր պահին ծիծաղը։ Ամենքը  
զարմացած նայեցին նրան։

«Մի վախենաք, — ասաց նա, մօտեցողը մեր  
նաւն է, Պեննիլէսը»։

Պեննիլէսի մեքենավարը վաղուց էր նկատել  
իրենց օդապարիկը՝ հալածական թշնամուց. նա  
դիզամամբ իսպանական դրօշակ էր պարզել և  
հետևում էր օդապարիկին, որ խաբէ թշնամուն  
և նրա ձեռքից ազատէ օդապարիկը։

Պեննիլէսը հասաւ իր նպատակին. նա հա-



սաւ օգապարիկին, ընդունեց մարդկանց իր մէջ  
և նոյն արագ ընթացքով սլացաւ թշնամու բազ-  
մաթիւ զրահանաւերի արանքով:

Թշնամին ուշ հասկացաւ իր խաբւելը. ըս-  
կսեց ումբակոծութիւնը, բայց արդէն ուշ էր:

Պեննիլէսն անցել էր հարկաւոր տարածու-  
թիւնը և դուրս եկել թշնամու շրջանից:

Ցաւն այն էր, որ նրանք հակառակ իրենց  
կամքի, տարերային բերմունքով հեռանում էին  
Կուբայից, թողնում էին ապստամբութեան վայրը:

Սակայն նրանք յոյս ունէին այլ ճանապարհ-  
ով կրկին գալ այդտեղ. գալ օգնութեան իրենց  
ընկերներին, լինել նորից Կուբայում, որտեղից  
տանում էին այնքան յիշողութիւններ քաղցր ու  
սրտամորմոք, յուզիչ ու գրաւիչ:

## XII

Տխուր էր Մասէօն. ինքն էլ չգիտէր, թէ  
ինչու. նա կրկին խօսք բացեց թշնամու մասին.  
մի անգամ էլ շնորհակալութիւն յայտնեց Սեր-  
րանօին, որ օգնեց նրան թշնամուց խուսա-  
փելու:

Նրանք գնում էին անտառով: Մասէօն ու  
Սերրանօն գնում էին ամենից առաջ զուգահեռ  
ուղղութեամբ: Նրանց հետևում էր այն փոքրիկ  
խումբը, որ վերցրել էր Մասէօն իր հետ:

Անտառի խորքում Սերրանօն ձին յանկար-  
ծակի սանձահարեց ու ցած թռաւ. նա յայտնեց,  
թէ ձիու թամբը թուլացել է, երևի մի ինչ որ

բան կտրւել է, ու սկսեց որպէս թէ ամրաց-  
նել: Նրա հետ կանգ առաւ և Մասէօն ու հրա-  
մայեց զինւորներին առաջ գնալ: Նա սպասեց  
Սերրանօին:

Ձինւորներն առաջ անցան և բաւական հե-  
ռացել էին, երբ լսեց համազարկը, որի արձագան-  
գը կրկնեց անտառում մի քանի անգամ: Մա-  
սէօն ձեռքը արագ դրեց կրծքին. մատների ա-  
րանքից ցայտեց կարմիր արիւնը: Նա ձիու վը-  
րայից գետին գլորւեց: Նրա վերջին խօսքերն  
էին՝ «կեցցէ ազատ Կուբան»:

Ձինւորները յետ դարձան և սկսեց կատա-  
ղի, բայց անհաւասար կռիւը հերոսի դիակի շուր-  
ջը, որ ընկաւ ստոր դաւաճանութեամբ: Թշնա-  
մին շրջապատեց Մասէօի անվեհեր մարտիկնե-  
րին, որոնք որոշեցին կամ մեռնել, կամ չտալ  
թշնամու ձեռքը իրենց պաշտելի ընկերոջ և ան-  
զուգական զօրավարի դիակը:

Նրանք ամենքն էլ ընկան հաւատարիմ ի-  
րենց զրօշակին, արժանի ազատութեան մարտի-  
կի կոչման:

Դաւաճան Սերրանօն ձին նստեց ու անյայ-  
տացաւ ծառերի մէջ...

Մասէօի մահը ոչ միայն վերջ չտուեց ապրս-  
տամբութեանը, այլ աւելի ևս բորբոքեց այն:  
Ազատութեան մարտիկները երբ լսեցին զօրա-  
վարի մահը, կրակ կտրեցին ու զիմեցին դէպի  
թշնամին. ոչ մի ոյժ չէր կարող նրանց ընթաց-  
քի առաջն առնել. վրէժի ծաղաւով տոշորւած՝



նրանք իրար յետևից մի քանի ճակատամարտ տւին ամերիկական նոր զէնքերով և Կուբայի մի մասն իսպառ մաքրեցին իսպանական զօրքից:

Ապստամբութիւնն աւելի լայն ծաւալ ստացաւ: Նոր ու թարմ ուժեր բռնեցին նահատակ անվեհեր մարտիկների տեղերը:

### XIII

Պեննիլէս նաւը անվտանգ դուրս եկաւ ափ. միայն ճանապարհին Ֆրիկետտան էր վերք ըստացել կրծքից: Վերքը թէև վտանգաւոր չէր, բայց մեծ էր և կարող էր անխնամք մնալով վտանգաւոր դառնալ:

Անփողեանը, որ իր կեանքի վտանգով այնքան մեծ ծառայութիւն արեց ապստամբութեան գործին, չէր կարող այդ գործի անձնէր զինւորներին անպաշտպան թողնել: Նրա հրաւերով մի քանի բժիշկ բժշկոււմ էին Ֆրիկետտային ու Մարիուսին: Սակայն սրանք երկար և արտասովոր ճանապարհորդութեան ընթացքում ու զըրկանքների տակ այնքան թուլացել էին, որ արագ առողջանալ չէին կարող: Անհրաժեշտ էր երկար հանգիստ ու անխուով կեանք:

Բժիշկները խորհուրդ տւին վերադառնալ հայրենիք, եթէ ցանկանում են կենդանի մնալ և օգտակար լինել մարդկութեան:

Անփողեանի հոգածութեամբ և միջոցներով

Ֆրիկետտան, Մարիուսն ու Պաբլօն անցան Եւրոպա և եկան Ֆրանսիա Ֆրիկետտայի ծնողների մօտ, որոնք մեծ փափագով ծերութեան օրերում սպասում էին իրենց միակ զաւակին:

Իսկ Ռոբերտն ու Կարմենը միացան Ամերիկայից Կուբա անցնող մի խումբ երիտասարդների հետ, որ գնում էին նոյն սուրբ գործին նւիրելու, մարդկային տարրական իրաւունքները պաշտպանելու:

Անցաւ վեց ամիս այն օրից, երբ Ռոբերտն ու Կարմենը բաժանւել էին ընկերներից: Մինչ այդ շատ բան էր անցել ու դարձել Կուբայում, որի մասին Ֆրիկետտան ոչ մի տեղեկութիւն չուներ:

Մի օր նստած պարտէզում Ֆրիկետտան զրուցի էր բռնւած ծնողների հետ, երբ զօսանքից վերադարձան Մարիուսն ու Պաբլօն: Ֆրիկետտան դեռ բոլորովին չէր առողջացել բայց ինքն իրեն լաւ էր զգում: Կուբա վերադառնալու միտքը նրա մէջ օր աւուր զարգանում էր. իսկ այդ բանը ի հարկէ նրա ծնողների սըրտովը չէր:

Ոստիկանը Կուբայի մասին էր: Մարիուսն էլ համամիտ էր Ֆրիկետտային:

Նոյն պահին նամակացիրը մի նամակ բերեց Ֆրիկետտայի անունով: Նամակը Կուբայից էր: Ռոբերտը համաձայն իր խոստման վերջապէս ժամանակ էր գտել գրել այն ամենի մասին, ինչ պատահել էր Կուբայում:



Նամակում Ռոբերտը նախ ներողութիւն էր խնդրում, որ այդքան ուշ էր պատասխանում. պատճառը կուի այն անակնկալ դէպքերն էին, որ հնարաւորութիւն չէին տալիս գրիչ վեր առնել ու իր սիրտը թափել պաշտելի անձնաւորութեան առաջ:

Ռոբերտը գրում էր, թէ բոլորովին ապացուցւել ու պարզւել է որ Մասէօն զոհ է դարձել դաւաճան ընկերոջ, Սերրանօի վստահութեան—Մասէօի մահը վաղուց յայտնի էր Ֆրիկետտային: Սերրանօի այդ ստոր վարմունքը կատարւել է Կարմենին կին վերցնելու նպատակով: Սերրանօն, երբ գլուխ է բերել իր սարքած դաւադրութիւնը ազնիւ Մասէօի դէմ, արագ դիմել է Մանէլ Ագվիլարի տունը նրանից ստանալու իր ցած արտրմունքի վարձատրութիւնը: Սակայն այնտեղ գտել է Ագվիլարի միայն դիակը:

Վօդուխտները, Ռոբերտի և նրա զինւորների կողմից, տաճարում ջարդ կրելուց յետոյ կարծում են, որ այդ ամենը—աղջիկները փախցնելն ու տաճար տանելը, կատարվել է Ագվիլարի կողմից, որպէս թակարդ վօդուխտներին պատժելու համար: Գրգռւած, նրանք յարձակւել են Ագվիլարի վրայ և նրա տան մէջ խողխողել նրան:

Սերրանօն սկսեցած իր խղճի և ամբողջ մարդկութեան առաջ, ասում են, ծածկանունով անցել է Ամերիկա:

Ապստամբութիւնը յաջող չըջանի մէջ է ազատութեան գործը մօտ է վախճանին: Ապստամբների մի շարք յաջողութիւններից յետոյ իսպանական կառավարութիւնը համաձայնել է որոշ զիջումներ անել:

Կարլոսն ընդհանուր հրամանատար է ազատութեան զօրքի, և կատարելով հազագիւտ յաջողութեամբ իր միսսիան, մօտիկ օրերս միայն հնարաւորութիւն գտաւ քիչ հանգստանալու և ամուսնացաւ իր մանկութեան օրերի ընկեր սիրած Կարմենի հետ:

Վերջում Ռոբերտն աւելացնում է, ստիպւած է խոստովանել, որ այն օրից, երբ իրարից բաժանւել են, Ֆրիկետտայի պատկերը երբէք չի հեռանում նրա հոգու առաջից. թէ պատերազմի հրաբորբոք վայրկենին և թէ բանակում հանգիստ առնելիս միշտ այդ պատկերը, անօրինակ անձնւորութեան, եղակի արիութեան և անսպառ կորովի այդ տիպարն է նրան ոգևորում, նրան կեանք ու շունչ տալիս: Նա իր պարտքը կատարելու հրամայական զրդումով բաժանեց նրանցից. ահա մօտ է այն օրը, երբ կրվերանայ ամեն մի պահանջ այդ պարտքի դիմաց և նա իր ամբողջ էութեամբ կընկրւի իր պաշտելի տիպարին:

Ֆրիկետտան, որ խօսք էր տւել սիրելի Ռոբերտին, կարդաց նոյն նամակը ծնողներին, բացեց իր սրտի գաղտիքը նրանց և ստացաւ նոյն օրհնութիւնը... \_\_\_\_\_



### ՀՐԱՏԱՐԱԿԶԻ ԿՈՂՄԻՑ

Ճշմարտութիւնը յաղթանակեց, ժողովուրդը հասաւ իր սուրբ նպատակին. Կուբան այժմ արդէն ազատ է...

Այսօր, 1913 թւի ապրիլ ամսին, վերջացաւ թուրք-բալկանեան պատերազմը, կնքւեց հաշտութեան պայմանը. կարող են նորից ակնկալներ պատահել, նոր բռնկումներ առաջ գալ, սակայն բալկանեան ժողովուրդները յաղթանակը փաստ է, և մեծ յաղթութիւնների փառաւոր էջերը պատմութիւն են դարձել:

Նման խաչակիրների՝ բալկանեան ժողովուրդը դիմում էր գեղեցիկ նպատակի: Այս անգամ ազատութիւնն էր մանր ազգերի երուսաղէմը, լուսաւորութիւնն ու անկախութիւնն էին փոխաւրինել, որպէս պաշտամունք, տիրոջ գերեզմանին:

Երեսուն տարւայ մէջ նոքա ստեղծեցին այն դպրոցը, որը թուրքական երեկւայ իրաւագործի ու խաւար ռայային բարձրացրեց ու դրեց լուսաւորւած ժողովուրդների շարքում:

Այժմ այդտեղ, չհաշւած մի քանի հազար մահմեդականների, ամենքը գիտեն կարգալ ու գրել, սիրում են գիրք ու թերթ:

Նոքա կեանքի կոչեցին ազատ հիմնարկութիւններ, և ժողովուրդը, ինչպէս մի մարդ, գիտակցաբար ու շահագրգիռ մասնակցում է իր բոլոր գործերին, ժողովուրդն ինքը վճռում է իր բախար:

Բառի բուն իմաստով ժողովուրդն է այդտեղ իշխողը, դիմոկրատ ոգին է համակում երկրի ողջ կեանքը, և այն վայրկեանին, երբ հնչում է գուժկանի ձայնը՝ «Հայրենիքը փտանգի մէջ է», բոլոր կուսակցութիւնները, տարբեր դաւանանքներն ու մտքերը, սկսած ծայրայեղ աջերից մինչև ծայրագոյն ձախերը, ձուլւում են, երկաթէ հղօր բազուկ կազմում ընդհանուր թըշնամու դիմաց:

Նախարար ու ժողովրդական պատգամաւոր, ուսուցչապետ, ուսուցիչ ու գրականագէտ, ինժեներ-բժիշկ-ամբողջ ժողովուրդը հազնում է զինւորի վերարկուն և իր քաղաքական հակառակորդի դեկավարութեամբ անցնում պատերազմի դաշտը, կուրօրէն հնազանդում նրան կուրի բոցերում:

Ամբողջ երկիրը ոտքի է կանգնում պաշտպանելու մարդկութեան յաւերժական պատէշները:

Քաղաքներ ու գիւղեր ուղարկում են իրենց զաւակներին, տալիս են վերջին ձին ու դոմէշը, ամեն ինչ, որ բերում էր նրանց բարօրութիւն... ամեն ինչ զոհւում է հայրենիքին...

Հասաւ ժամը և ամբողջ ժողովուրդը միաբերան աղաղակեց. յաղթութիւնը համարձակի բաժինն է: Լինում են շրջաններ, երբ մահը գերազասելի է տատանւելուց և յետ կրնկելուց, միշտ յառաջ...

Փոքրաթիւ «Մեծ ժողովուրդը» (սև լեռն-

ԵՐԵՎԱՆ




ցիք, սերբերը, բուլղարն ու յոյները) ասպարէզ  
բերին և՛ հանճար, և՛ գիտութիւն:

Մանլիխարն ու Կրեզոն չէին, որ յաղթեցին  
մատուցներին և կրուպին (հրացան և թնդանօթ)...

Քարը չէր, որով Դաւիթը գողիւթին գլորեց,  
այլ գիրքը.

Բռնակալն ու նրա բռնութիւնը, որ երեկ  
անպարտելի էին թուում, այսօր խորտակւած են,  
պոկւած գրանիտէ պատւանդանից ու փոշի դար-  
ձած և այն էլ այն մանուկ ազատութեան հարւա-  
ծից, որ երեկ ծնունդ առաւ. և բերեց իր հետ  
ինքնավար անկախ քաղաքացուն:

Լոյսը խաւարի յաղթողն է...



# ՀԱՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒՂԵԱՆԻ

Հայ ազագրութեան 200 և ատուի գիւտի 1500-ամեայ  
յօրիկանի յիշատակին

- 1) Կորած Սարը և  
Ոսկէ Կուռքի գանձը . . . . . 20 Կ.
- 2) Փոքրիկ պատմաւածքներ . . . . . 20 Կ.
- 3) Գօրիլլա և ուրիշ պատմաւածքներ . . . . . 20 Կ.
- 4) Երեք պատմաւածք . . . . . 20 Կ.

Պատահաւ է ազագրութեան համար

- 5) Անտառի զաւակները:







ՀՀ Ազգային գրադարան



NL0168342



